# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 41 (1491) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 13, 2010
VOLUME 30, NO. 41 (1491) SATURDAY, NOVEMBER 13, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՍՐՈՊ ՄՈՎՍԷՍԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅ ԴԱՐՁԵԱԼ ՄԵՐԺԵԼՈՒ «Ա1+»-Ի ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ

Աւելի քան 8 տարի առաջ Քոչարեանի իշխանութեան օրօք փակուած Հայաստանի միակ անկախ հեռատեսիլի ալիքի՝ «Ա1+»-ի տնօրէն Մեսրոպ Մովսէսեան յայտնեց որ, Հեռուստատեսութեան եւ Ռատիոյի Ազգային Յանձնաժողովի (ՀՌԱՀ) յայտարարած մրցոյթը նախորդներու նման է:

«Ա1+»-ը եթերազրկուեցաւ 2003-ի նախագահական ընտրութիւններու նախօրեակին: ՀՌԱՀ-ը՝ Գրիգոր Ամալեանի գլխաւորութեամբ, 8 տարիներու ընթացքին տեղի ունեցած արտօնագրի 12 մրցոյթներուն մերժած էր «Ա1+»-ի դիմումները: Այս օրերուն ընթացող մրցոյթին, «Ա1+»-ի հետ նոյն ալիքին համար դիմած է նաեւ այժմ գործող «Արմնիւզ»-ը

«Կայ նորից միտում՝ քաղաքական որոշում, նորից լիցենզիա չտրամադրել», - Նոյեմբեր 8-ին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Մովսէսեան: - «Այն, ինչ ներկայացրել էր «Արմնիւզ»-ը, որեւէ կապ չունէր իրականութեան հետ: Կապուղին ոչ թէ վերահեռարձակման կապուղի է, որը տրամադրուել է «Եւրոնիւզ»-ին, ինչ-որ ժամեր յատկացնելով «Արմնիւզ»-ին, որն աշխատում է «Արմենիա»-ի տեխնիկական բազայով եւ աշխատակազմով: Դա բաւականին լուրջ խախտում է, եւ ինձ համար զարմանալի է, որ պարոն Ամալեանի գլխաւորած յանձնաժողովը դրա վրայ ուշադրութիւն չի դարձնում», - աւելցուց «Ա1+»-ի տնօրէնը:



«Ա1+»-ի տնօրէն Մեսրոպ Մովսէսեան

Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանը 2008-ի Յունիս 17-ի իր մէկ որոշումով մասամբ բաւարարեց «Ա1+»-ի բողոքը, հաստատելով որ խախտուած է հեռուստաընկերութեան՝ ազատօրէն տեղեկութիւններ եւ գաղափարներ տարածելու իրաւունքը:

«Ստեղծուած չեն հաւասար պայմաններ, ինչպէս Դատարանի որոշման պահանջն էր: Մօտ երկու տարի սպասում էի հաւասար պայմաններ ստեղծուած մրցոյթի, եւ նորից տեսայ, որ շարքային մրցոյթ էր», - յայտնեց Մեսրոպ Մովսէսեանը:

Մրցոյթի արդիւնքը պիտի յայտարարուի Դեկտեմբեր 16-ին:

## ԱԲԴՈՒԼԼԱՅ ԳԻՒԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԼՈՒՌ ՁԵՒՈՎ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Թուրքիոյ հանրապետութեան նախագահ Աբդուլլահ Գիւլ Լոնտոն մեկնելու ճանապարհին ինքնաթիռին մէջ Թուրք լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսած է որ, Հայաստանի հետ սկսած գործընթացը տակաւին կը շարունակուի՝ լուռ ձեւով:

Թուրք լրագրողներէն մէկը հարց տուած է թէ՝ «Լոնտոնի մէջ մրցանակ պիտի ստանաք Հայաստան-Թուրքիա մերձեցման գործընթացի համար: Սակայն այսօր այդ ասպարէզէն ներս զարգացումներ տեղի չեն ունենար: Ի՞նչ կ՚ըսէք այդ առնչութեամբ», Աբդուլլահ Գիւլը պատասխանած է. «Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ մեկնարկած յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը ոչ մահացած է, ոչ ալ սառած: Ուղղակի որոշ բաներ անձայն կ՚ընթանան»:

Աբդուլլահ Գիւլ վերջին շրջանին մի քանի անգամ խօսած էր Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ ընթացող այսպէս կոչուած «լուռ դիւանագիտութեան» մասին: Սակայն վերջերս Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան «Ուոլ Սթրիթ Ժուրնըլ» թերթին մէջ հրապարակուած իր յօդուածին մէջ ըսած էր.«Չկայ ո՛չ «լուռ դիւանագիտութիւն», ո՛չ Ցիւրիխի «երկրորդ շրջան», ո՛չ բանակցութիւնների որեւէ նոր փուլ, ինչպէս դա վերջերս փորձում է յաճախ ներկայացնել Թուրքական մամուլը: Այս երկարատեւ գործընթացում առկախուած միակ քայլը հայ-Թուրքական արձանագրութիւնների վաւերացումն ու իրագործումն է՝ առանց հետագայ ձգձգման»:

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐ ՓՈՐՁԱԾ ԵՆ ՀԱՐՍՏԱՑՈՒԱԾ ՈՒՐԱՆ ՎԱՃԱՌԵԼ ԻՍԼԱՄ ԽՄԲԱՒՈՐՈՒՄՆԵՐՈՒ



Անգլիական «Կարտիըն» թերթը գգայացունց տեղեկութիւններ հրապարակած է Իսլամ ահաբեկչական կազմակերպութիւններուն ուրանի վաճառելու փորձի մասին, որու հեղինակները եղած են երկու հայեր:

Ըստ թերթի հրատարակած տեղեկութիւններուն, Վրաստանի ապահովութեան մարմինները այս տարուայ Մարտ ամսուն ձերբակալած են Հայաստանի քաղաքացիութիւն ունեցող երկու անձ, որոնցմէ մէկը կը ներկայացուի որպէս գործարար, Սմբատ Տոնոեան անուամբ, միւսը՝ ֆիզիկոս, Հրանդ Օհանեան: Երկուքի մօտ յայտնաբերուած է 18 կրամ հարստացուած ուրան, որ Երեւանէն գնացքով տեղափոխած են Թիբլիս:

Վրաստանի Նախագահ Միխայիլ Սահակաշվիլի այս դէպքի մասին խիստ գաղտնի պայմաններու մէջ յայտնած է Ուաշինկթըն մէջ կայացած միջուկային անվտանգութեան գագաթաժողովի կարգ մը մասնակիցներուն:

«Կարտիըն» կը յայտնէ որ, յետխորհրդային երկիրներու սեւ շուկաներու համար նախատեսուած միջուկային զէնքի հումքը հարստացուցած են Տոնոեանն ու Սմբատեանը՝ Հայաստանի մէջ: Անոնց կողմէ հարստացուած ուրանը չեն կրցած ճշդել նոյնիսկ ամերիկեան յատուկ սարքերը: Ամերիկեան մասնագէտները պարզած են որ, ուրանը հարստացուած է մինչեւ 89.4%, ինչ որ կարելիութիւն կու տայ միջուկային գլուխ պատրաստելու:

Անգլիական թերթը յաւելեալ տեղեկութիւններ հրապարակած է միջուկային զէնքի հումքը տեղափոխողներու մասին: Սմբատ Տոնոեան 63 տարեկան գործարար է, որ կը զբաղէր կաթնամթերքի գործով, իսկ հետագային խաղամոլութեամբ տարուելով կորսնցուցած է իր ամբողջ ունեցուածքը: Հրանդ Օհանեան 59-ամեայ ֆիզիկոս է: Ան կազմակերպած է գնորդի հետ հանդիպումը այս տարուայ Մարտ 11-ին, Թբիլիսի հիւրանոցներէն մէկուն մէջ: Տոնոեան ու Սմբատեան փորձած են վաճառել ուրանը, կարծելով թէ գնորդը իսլամ խմբաւորումի ներկայացուցիչ է, սակայն իրականութեան մէջ այդ անձը եղած է

Շար.ը էջ 4

## ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐԱ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՍՈՒԼԻՍԸ «ԹՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՑՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐԸ» (1980-2010)

1980 թուականին Թրքական իշխանութիւնները Հայոց ցեղասպանութեան ուրացման կապակցութեամբ նոր ռազմավարութիւն մը որդեգրեցին: Այդ ռազմավարութիւնը թէեւ մասնատուեցաւ, սակայն՝ ցարդ ի զօրու կը մնայ:

Վերոյիշեալ նիւթի առնչութեամբ՝ Հայ-Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) նախաձեռնութեամբ, հրաւէր ուղղուած է պատմաբան Արա Սարաֆեանին, որպէսզի հրապարակային ասուլիսով մը, ելոյթ ունենայ «Թրքական ուրացութեան քաղաքական ծալքերը» (1980-2010) հարցին շուրջ: Սոյն միջոցառումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Երեքշաբթի, Նոյեմբեր 16ին, երեկոյեան ժամը 8-ին, Կլենտէյլի Հանրային Գրադարանի հանդիսասրահին մէջ, 22 East Harvard Street, Glendale, CA:

Արա Սարաֆեան պատմաբան է, մասնագիտացած է Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի եւ արդի Հայաստանի պատմութեան մէջ: Պսակաւոր Արուեստից եւ քաղաքագիտութեան վկայականն ստացած է Ուալլասի համալսարանէն, իսկ Մագիստրոս Արուեստից Պատմութեան մէջ տիտղոսն ստացած է Միչիկըն համալսարանէն (Ann Arbor) եւ այդ մարզի դոկտո-



Շար.ը էջ 4

# ԱՄՆ ՕՐԻՆԱԿԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Ասել, թէ Հայաստանում մեծ հետաքրքրութեամբ էին հետեւում Միացեալ Նահանգների Կոնգրէսի միջանկեալ ընտրութեանը, թերեւս կը լինի չափազանցութիւն: Կարելի է թերեւս ասել, որ պարզապէս կային հետեւողներ: Մի մասի համար շարժառիթն այն էր, թէ արդեօք ով է մեծամասնութիւն կազմելու Կոնգրէսի պալատներում, յատկապէս Ներկայացուցիչների պալատում, որպէսզի պարզ լինի, թէ ինչ ճակատագիր է սպասում հայերի ցեղասպանութեան մասին բանաձեւին, որը կարծես թէ Ներկայացուցիչների պալատում ինչ որ տեղ է լռուած: Միւս մասի շարժառիթն այն է, որ ԱՄՆ միակ գերտէրութիւնն է, որի ներիշխանական դասաւորութիւնն անխուսափելիօրէն ազդեցութիւն է թողնում տարբեր տարածաշրջանների վրայ, իսկ Հայաստանն այնպիսի տարածաշրջանում է, որտեղ ԱՄՆ ունի ռազմավարական լուրջ շահեր: Երկրորդ շարժառիթի տակ հիմնականում նկատի է առնւում թերեւս Ղարաբաղի հարցը, որը տարածաշրջանային զարգացումներում առանցքային նշանակութիւն ունեցող գործօն է:*

*Թերեւս դրանք էին այն երկու հիմնական շարժառիթները, որոնք Հայաստանի հասարակութեան որոշ անդամների կամ խմբերի ստիպում էին հետեւել ամերիկեան ընտրութեանը: Թէեւ կային նաեւ մարդիկ ու խմբեր, գուցէ առաւել փոքրաթիւ, որոնք այդ ամէնին հետեւում էին պարզապէս հետաքրքրասիրութիւնից դրդուած, տեսնելու համար, թէ օրինակ բաւական շռնդալից կերպով մեծ քաղաքականութիւն մուտք գործած նախագահ Օբաման ինչպէս է անցկացնելու իր առաջին քննութիւնը:*

*Այդ իմաստով, Օբաման քննութիւնը թերեւս յանձնեց: Բանն այն է, որ նրա Դեմոկրատական կուսակցութիւնը թէեւ կորցրեց մեծամասնութիւնը Ներկայացուցիչների պալատում, բայց կարողացաւ պահել մեծամասնութիւնը Կոնգրէսի վերին պալատում՝ Սենատում: Այսինքն, ընտրութիւնը Օբամայի համար աւարտուեց թերեւս 50/50 ելքով, մի քիչ այս կողմ, մի քիչ այն կողմ: Նկատի ունենալով այն ծանր իրավիճակը, որում Օբաման ստանձնել է նախագահութիւնը, այն լրջագոյն տնտեսա-քաղաքական եւ հոգեբանական մարտահրաւէրները, որ կան ԱՄՆ հասարակութեան առաջ, ինչպէս նաեւ գերտէրութեան միջազգային պարտաւորութիւնները համաշխարհային բարդ պայմաններում, թերեւս կարելի է ասել, որ Օբաման միջանկեալ ընտրութիւններում ցոյց տուեց բաւական լաւ արդիւնք: Դա թերեւս հետաքրքրասէրների համար:*

*Ինչ վերաբերում է ցեղասպանութեան եւ Ղարաբաղի հարցերին, ապա այստեղ թերեւս էական փոփոխութիւններ ակնկալելն աւելորդ է: Նոյնիսկ մարտավարական փոփոխութիւնները քիչ հաւանական են: Եւ դա գուցէ աւելի շատ կախուած է ոչ թէ ընտրութեան արդիւնքում ուժերի դասաւորութիւնից, որքան ամերիկեան իստեբլիշմենտի առաջ կանգնած առաջնահերթութիւններից: Իսկ դրանցում, կարծես թէ, առայժմ գերակայ են ներքին կեանքի հետ կապուած խնդիրները: Ամերիկեան իստեբլիշմենտի մօտ տրամաբանութիւնը թերեւս բաւական պարզ է եւ հասկանալի. որպէսզի երկիրը արտաքին ոլորտում լինի կենսունակ, արդիւնաւէտ եւ ուժեղ, անհրաժեշտ է, որ նա ամուր լինի ներքին կեանքում: Դրա համար, ամերիկեան քաղաքականութիւնն ակնյայտօրէն դադարի մարտավարութիւն է կիրառում արտաքին քաղաքական հարթութիւնում, իհարկէ ոչ այդ բառի բացարձակ իմաստով: Պարզապէս այն տարածաշրջաններում, որտեղ ԱՄՆ կենսական շահերը չեն շօշափւում, ամերիկեան իշխանութիւնը կիրառում է առաւելապէս սպասողական կեցուածք, եւ գլխաւոր խնդիրը կարծես թէ իրավիճակից եւ ժամանակից հետ չընկնելն է:*

*Հիմնական ուշադրութիւնն ու էներգիան թերեւս կենտրոնացուած է ներքին կեանքի վրայ, որտեղ կան սոցիալական, տնտեսական, հոգեբանական լուրջ խնդիրներ: Ամերիկեան իստեբլիշմենտը գիտակցում է, որ աշխարհաքաղաքական յաւակնութիւնները կարող են լինել խիստ կարճաժամկէտ, անհաստատ եւ հակառակ էֆեկտ ունենալ, եթէ ներքին ամրութիւն չկայ: Այդ պարզ իրողութիւնը, որ ցանկացած արտաքին քաղաքականութիւն կարող է արդիւնաւէտ լինել միայն համարժէք ներքին քաղաքականութիւն ունենալու, ներքին կեանքում հանրային աջակցութիւն վայելելու դէպքում, ամերիկեան իստեբլիշմենտը թերեւս գիտակցում է աշխարհում ամենից աւելի լաւ:*

*Ի վերջոյ, յատկանշական է, որ հանրապետական Բուշ Կրտսերի վարչակազմը ակտիւ եւ ագրեսիւ արտաքին քաղաքականութիւն էր վարում այն ներքին տնտեսական աճի եւ վերելքի հիմքի վրայ, որն արձանագրուել էր դեմոկրատ Բիլ Քլինթոնի նախագահութեան տարիներին, երբ ԱՄՆ տնտեսութիւնն աներեւակայելի աճ էր արձանագրում: Չլինէր այդ աճը, Բուշ Կրտսերը հազիւ թէ ունենար այդօրինակ ագրեսիւ եւ նախաձեռնողական արտաքին քաղաքականութիւն վարելու բազա:*

*Թէեւ այդ առումով իհարկէ իրավիճակը միարժէք չէ եւ ակնյայտ է, որ Բուշ Կրտսերի վարչակազմի մօտ տեղի ունեցան հաշուարկային սխալներ ներքին բազայի եւ արտաքին առաջնահերթութիւնների յարաբերակցութեան առումով, եւ բանը հասաւ այնտեղ, որ պատճառահետեւանքային կապը կտրուեց, առաջ բերելով ճգնաժամային իրավիճակ ներքին կեանքում: Բայց, միեւնոյն ժամանակ, հենց այդ իրավիճակը դարձաւ ԱՄՆ-ում տնտեսաքաղաքական, սոցիալ-մշակութային մտքի գեներացիայի նոր ալիքի խթանիչ, որը քննարկման առարկայ դարձրեց ոչ միայն ֆինանսական ճգնաժամի, այլ շատ աւելի խորքային խնդիրների առկայութիւնն ամերիկեան հասարակութեան մէջ: Բայց դա իհարկէ այլ խօսակցութեան նիւթ է:*

*Հետեւաբար, թերեւս մեծ է հաւանականութիւնը, որ մինչեւ 2012 թուականի նախագահի ընտրութիւն, ամերիկեան իստեբլիշմենտի հիմնական առաջնահերթութիւնը լինելու է ներքին կեանքը, ներքին հիւսուածքների ամրացումը: Այդ իսկ պատճառով, առաջիկայ երկու տարուայ ընթացքում, անկախ դեմոկրատ-հանրապետական ուժերի դասաւորութիւնից, քիչ հաւանական է, որ ԱՄՆ էական մեթոդաբանական փոփոխութիւնների գնա արտաքին քաղաքական հարցերում: Իսկ դա էլ նշանակում է, որ թէ ցեղասպանութեան, թէ Ղարաբաղի հարցում, առաջիկայ առնուազն երկու տարիներին շատ քիչ է ամերիկեան ներկայիս դիրքորոշման եւ վարքի փոփոխութեան հաւանականութիւնը:*

*Ի դէպ, ամենեւին վատ չէր լինի, որ այդ ամենից օրինակ վերցնէր Հայաստանը: Օրինակ վերցնէր, եւ մինչեւ արտաքին «նախաձեռնողականութիւններ» դրսեւորելը առաջնահերթ համարէր ներքին կեանքին ուշադրութիւն դարձնելը, ու փորձագիտական հանրութեան մտքերն էլ այդ խնդիրների վրայ կենտրոնացնէր նաեւ Հայաստանի քաղաքական իստեբլիշմենտը, որքան էլ այդ բառը մի քիչ ամպագորգոռ հնչի հայաստանեան քաղաքական, յատկապէս իշխանական դասի առումով:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Կիրակի օրը խորհրդարանական ընտրութիւններն Ադրբեջանում անցան հանգիստ, առանց լուրջ միջադէպերի, իշխող կուսակցութիւնն ամբողջութեամբ «վերարտադրուեց»: Դրա հիմնական պատճառները յայտնի են:*

*1- Ադրբեջանական հասարակութիւնը անտարբեր է եւ միաժամանակ՝ վախեցած:*

*2- Ընդդիմադիր բազմաթիւ թեկնածուներին պարզապէս չեն գրանցել:*

*3- Այդ երկրի հեռուստաեթերում ազատ լրատուամիջոցներ չկան:*

*4- Ընտրութիւններն այնտեղ ամբողջութեամբ մեծամասնական են, ինչը, ինքնին, զուտ տեսականօրէն, կարող է ժողովրդավարութեան համար խոչընդոտ չլինել, սակայն մեր նման երկրներում նպաստում է ընտրութիւնների ապաքաղաքականացմանը եւ հետեւաբար՝ «այլ գործօնների» գերակայութեանը:*

*5- Ադրբեջանում չկայ հզօր եւ ազդեցիկ ընդդիմադիր քաղաքական ուժ:*

*Զուգահեռ անցկացնելով Հայաստանի հետ՝ կարելի է ասել, որ ընտրութիւնները կեղծելու առաջին եւ երրորդ լծակները առկայ են նաեւ մեր երկրում, երկրորդը, ենթադրում եմ, եթէ կիրառուի էլ, ապա՝ սահմանափակ, իսկ վերջին երկուսի մասին կարելի է ասել, որ Հայաստանում ընտրութիւնները հիմնականում համամասնական են, եւ մեզ մօտ կայ ազդեցիկ ընդդիմադիր քաղաքական ուժ: Չնայած այդ տարբերութիւններին, որոնք արտացոլում են ոչ այնքան ռեժիմների տարբերութիւնները, որքան «մենթալիտետային նրբութիւնները», այսօր պնդել, թէ մեր երկու երկրների քաղաքական մշակոյթների միջեւ սարուձորի տարածութիւն կայ, չափազանցութիւն կը լինի: Եթէ ամէն ինչ ընթանայ այնպէս, ինչպէս այսօր է ընթանում, ապա Հայաստանում 2012 թուականի խորհրդարանական ընտրութիւնները նոյնպէս կ'անցնեն հանգիստ, խաղաղ եւ առանց լուրջ միջադէպերի: Որովհետեւ, ինչպէս յայտնի է, ընտրութիւնների արդիւնքները կեղծւում են ոչ միայն քուէարկութեան օրը: Դրանք կեղծւում են այն ժամանակ, երբ որեւէ անկախ հեռուստատեսութիւն եթեր չունի, երբ պետական ու ուժային բոլոր կառոյցները, կրթական հիմնարկները, ինչպէս նաեւ էլցանցը, ջրմուղը եւ այլն այսօրուանից աշխատում են իշխող կուսակցութիւնների յաղթանակն ապահովելու վրայ, երբ այսօր արդէն որոշուած է, թէ ինչպէս է բաժանուելու փողը՝ ոչ միայն ընտրողներին, այլեւ ընտրական յանձնաժողովների անդամներին, վստահուած անձանց եւ դիտորդներին: Այնպէս որ, շատ հնարաւոր է, որ առաջիկայ ընտրութիւններում սափրագլուխների, գողականների եւ թաղի խուժանի «աջակցութեան» կարիքը չի լինելու. մարդիկ ծաղիկներով, փուչիկներով եւ փողային նուագախմբերի նուագակցութեամբ կը գնան ընտրական տեղամասեր եւ կը քուէարկեն «այնպէս, ինչպէս որ պէտք է»: Պրեսկոտի եւ Կոլոմբիէի նման դիտորդները ընտրական գործընթացի վերը թուարկած «մանր թերութիւնները», իհարկէ, չեն նկատի: Հայաստանի ներսում էլ են աշխատում մեր իշխանութիւնների հետ լիովին «ինտեգրուած» պաշտօնեաներ, որպիսիք են Ռաուլ Լիւցենբերգերն ու Սերգէյ Կապինոսը, որոնք կ'ողջունեն ցանկացած ձեւով անցկացուած ընտրութիւն:*

*«ԱՌԱՒՕՏ»*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ 4 ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿՈՒԵԼ



*Ազատ արձակուած երիտասարդները ՀԱԿ-ի հանրահաւաքի ընթացքին՝ հարթակի վրայ*

Երեքշաբթի, Նոյեմբեր 9-ին «Եւրամիութիւն-Հայաստան. Քաղաքացիական հասարակութիւն» համաժողովի մեկնարկի առթիւ «Երեւան» հիւրանոցի դիմաց Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) կազմակերպած պիկետի ժամանակ կենտրոնի ոստիկանութիւն բերման ենթարկուած 4 երիտասարդները ազատ են արձակուել եւ մասնակցեցին ՀԱԿ-ի երեկոյեան հանրահաւաքին:

Չորս երիտասարդները՝ Սարգիս Գէորգեանը, Վահագն Գէորգեանը, Արեգ Գէորգեանը եւ Սարգիս Ղազարեանը, ովքեր բերման էին ենթարկուել ոստիկանի նկատմամբ բռնութիւն գործադրելու կասկածանքով, կենտրոնի ոստիկանութեան բաժանմունքում անցկացրեցին աւելի քան 8 ժամ:

Ազատ արձակուած երիտասարդները «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում պնդեցին, որ բերման ենթարկելիս, ինչպէս նաեւ ոստիկանութեան բաժանմունքում իրենց նկատմամբ բռնութիւն է գործադրուել, նշանակուել է դատաբժշկական փորձաքննութիւն:

Ամէն ինչ սկսուեց նրանից, որ համաժողովի մեկնարկելուն պէս Հայ ազգային կոնգրէսի 7 երիտասարդ ակտիւիստներ՝ «Հայաստանում քաղբանտարկեալների առկայութիւնն ամօթալի է Եւրոպայի համար», «Յանցագործութիւն կատարելը կամ յանցագործներին աջակցելը. ո՞րն է տարբերութիւնը», «Եւրոպա, մի սատարիր բռնակալներին», «Եւրոպա, դու թոյլ ես տալիս այս ռեժիմին 12 քաղբանտարկեալներ պահել» բովանդակութեամբ պաստառներ պարզած լուռ կանգնեցին Երեւան հիւրանոցի շէնքի դիմաց:

Տարածքը հսկող երկու տասնեակ ոստիկաններից մի քանիսը մօտեցան եւ պահանջեցին հետ գնալ եւ կանգնել ոստիկանութեան տեղադրած արգելապատնէշից դուրս: Եւ երբ երիտասարդները փորձեցին պարզել, թէ ինչու, ոստիկանները փորձեցին նրանց հրելով հեռացնել: Չենթարկուելով՝ երիտասարդները պառկեցին գետնին եւ պարզեցին պաստառները, սկսուեց հրմշտոց: Այնուհետեւ երիտասարդներին տարան ոստիկանութեան բաժին:

Նոյն օրը Երեւանում բացուեց «Եւրամիութիւն. Հայաստան. քաղաքացիական հասարակութիւն» երկօրեայ սեմինարը՝ նուիրուած արդար դատաքննութեան իրաւունքին եւ դատական իշխանութեան անկախութեան հարցերին:

Սեմինարը, որին մասնակցում են Եւրամիութեան երկրներից ժամանած փորձագէտներ, բացեց Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանը:

«Մենք պէտք է ընդունենք, որ Հայաստանի Հանրապետութիւնում արդար դատաքննութեան իրաւունքը լիարժէք դեռ ձեւաւորուած չէ, վստահութիւն չկայ դատական իշխանութեան նկատմամբ: Ցաւօք, շատ դէպքերում նաեւ մրցակցութեան սկզբունքը միշտ չէ պաշտպանուած դատական գործընթացում», - ասաց Արմէն Յարութիւնեանը՝ յաւելելով, որ դատարանները Հայաստանում շարունակում են կրել դատախազական համակարգի ազդեցութիւնը, ինչը «նենգափոխում է դատարանի՝ իբրեւ արդարադատութեան մարմնի դերն ու նշանակութիւնը»:

Երեկոյեան, ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսը հանրահաւաք անցկացրեց Մատենադարանին յարող տարածքում:

Հայաստանի առաջին նախագահ, ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը կրկին քննադատեց միջազգային հանրութեանը՝ Հայաստանում մարդու իրաւունքների խախտումներն անտեսելու եւ կալանաւորուած ընդդիմադիրներին ազատ ազատ արձակելու ուղղութեամբ Հայաստանի իշխանութիւնների վրայ անհրաժեշտ ճնշում չգործադրելու համար:

Այնուհետեւ առաջին նախագահը հանգամանօրէն խօսեց այն մասին, թէ ինչու միջազգային հանրութիւնը անհրաժեշտ ջանքեր չի ներդնում «քաղբանտարկեալներին ազատ արձակելու գործում»:

Ըստ Տէր-Պետրոսեանի՝ միջազգային հանրութիւնը արդարացնում է Հայաստանում մարդու իրաւունքների խախտումները, ասելով, որ «ժողովրդավարութեան տեսակէտից Հայաստանը աւելի բարւոք վիճակում է քան, ասենք,

Շար.ը էջ 17

# «ԼՂ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄՆ Է»

Առաջիկայ մեր անելիքը եւ թիւ մէկ խնդիրը ԼՂ-ն բանակցային սեղանի շուրջ վերադարձնելն է: Աւուլիսի ժամանակ յայտարարեց ԱԺ «ՀՀԿ» խմբակցութեան պատգամաւոր Արտակ Դաւթեանը:

Անդրադառնալով ազատագրուած տարածքները որպէս փոխզիջում վերադարձնելու մասին խօսակցութիւններին՝ Արտակ Դաւթեանը նշեց, որ Հայաստանն արդէն մի շարք զիջումներ արել է՝ մինչեւ այսօր չի ճանաչել Արցախի անկախութիւնը, բանակցում է նրա անունից:

«Տարիների հեռուից նորից ԼՂ-ն բանակցային սեղան վերադարձնելու գերխնդի՞ր էք դրել: Էն ժամանակ, որ Ռոբերդ Քոչարեանը դաշտային հրամանատարի կեցուածքով նստեց բանակցութիւնների, բա ո՞ւր էին միւսները, չբացատրեցի՞ն, որ ի վերջոյ Ղարաբաղը պէտք է լուծի իր խնդիրը»,- Արտակ Դաւթեանի յայտարարութեանն արձագանքեց բանավէճի միւս մասնակից, «Հանրապետութիւն» կուսակցութեան անդամ, ՆԳ նախկին նախարար Սուրէն Աբրահամեանը: Նա նշեց, որ Ղարաբաղեան պատերազմում հնարաւոր է եղել յաղթանակի հասնել, որովհետեւ եղել է մի կարեւոր հանգամանք՝ ղարաբաղցին կառչած է եղել իր հողին, ապրել է այնտեղ:

Ըստ Սուրէն Աբրահամեանի՝ ԼՂ հարցը մի օր անպայման լուծուելու է, բայց լուծման լաւագոյն տարբերակը ազատագրուած տարածքների բնակեցումն է, ԼՂ զարգացումը՝ իր թիկունքին զգալով հզօր Հայաստանի աջակցութիւնը:



*Նախկին նախարար Սուրէն Աբրահամեան*

Սուրէն Աբրահամեանը յայտարարեց, որ Ղարաբաղից Երեւան եկած բոլոր պաշտօնեաները պէտք է վերադառնան Ղարաբաղ: «Ղարաբաղցին Երեւանում գերեզման չպէտք է ունենայ»,- ասաց նա:

Արտակ Դաւթեանը համաձայնեց, որ պէտք է բնակեցնել Լեռնային Ղարաբաղը՝ միաժամանակ նշելով, որ «այնտեղ ապրելը պէտք է լինի նաեւ շահութաբեր», ինչի համար հարկաւոր է զարգացնել թէ Հայաստանը, թէ Լեռնային Ղարաբաղը: Սուրէն Աբահամեանն էլ արձագանքեց, թէ ինքն այդքան միամիտ չէ, որ չհասկանայ, թէ բնակեցման համար ինչ պայմաններ է հարկաւոր ստեղծել: «Ես կոնկրետ մարդկանց մասին եմ ասում, որոնք հեղինակութիւն են»,- ասաց նա՝ յաւելելով, որ եթէ այդ հեղինակաւոր մարդիկ ապրեն Ղարաբաղում, ոչ ոք չի կարող յայտարարել, թէ տարածքները յանձնելու են:

«Հենց պաշտօնից զրկւում են, գալիս են Հայաստան»,- ասաց Աբրահամեանը: Դաւթեանը արձագանքեց, թէ Աստուած մի արասցէ, եթէ պատերազմ վերսկսուի, նոյն անձինք կը վերադառնան Ղարաբաղ:

# ՌԱԶՄԻԿ ԶՈՀՐԱԲԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ ԱԶԱՏ Կ'ԱՐՁԱԿՈՒԵՆ ՄԻՆՉԵՒ ՅԱՋՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանը կարծում է, որ մինչեւ յաջորդ ընտրութիւնները իշխանութիւնները կարող են ազատ արձակել կալանաւորուած ընդդիմադիր գործիչներին:

«Արդէն կան նախադէպեր, կարծում եմ՝ դա կիրառւում է: Դէմ չեմ, եթէ մարդիկ որոշակի պատժաժամկէտ անցկացրել են, եւ հետագայում, հենց դուրս գալուց յետոյ, նման գործողութիւններ չեն անելու, կարելի է», - նշեց իշխող կուսակցութեան փոխնախագահը՝ յաւելելով. - «Կարծում եմ՝ շատ հնարաւոր է, որ, որպէսզի ընտրութիւններին մենք գնանք մարդու իրաւունքները յարգած եւ ժողովրդավարութեան ընթացքին տուրք տուած, ազատուեն: Ի վերջոյ՝ դրանք ազատուելու են»:

Հոկտեմբերի 29-ին վաղաժամկէտ ազատ արձակուեց մարտիմէկեան իրադարձութիւնների առնչութեամբ անազատութեան մէջ գտնուող Աշոտ Մանուկեանը, ով Հայոց համազգային շարժում կուսակցութեան վարչութեան անդամ է եւ ՀՀՇ-ի Լոռու կառոյցի ղեկավար: Պէտք է նշել, որ Մանուկեանը իր ազատումը համարում է քաղաքական որոշում, եւ վնաձոր քրէակատարողական հիմնարկից դուրս գալուց անմիջապէս յետոյ յայտարարել է, որ շարունակելու է պայքարը՝ արդէն ազատութեան մէջ:

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի մամուլի խօսնակ Արման Մուսինեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում վստահութիւն յայտնեց, որ ընտրութիւններին ընդառաջ՝ բոլոր կալանաւորուած ընդդիմադիրներն ազատ են արձակուելու:

«Քաղաքական պրոցէսները տանում են նրան, որ իշխանութիւնները այս հարցում մանեւրելու տեղ չեն ունենալու», - վստահ է Մուսինեանը:

Մինչդեռ, Հայաստանի հելսինկեան ասոցիացիայի ղեկավար Միքայէլ Դանիէլեանի կարծիքով, իշխանութիւնը ի վերջոյ կը կայացնի քաղաքական որոշում՝ ազատելով կալանաւորուած ընդդիմադիրների մեծ մասին, բայց ոչ բոլորին:

«Իմ կարծիքով, կարող է թողնեն մէկ-երկու հոգի՝ Նիկոլ Փաշինեանին եւ Սասուն Միքայէլեանին, որոնցից վախենում են, որովհետեւ նրանց յեղափոխական ջիղը շատ ուժեղ է», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց Դանիէլեանը:

massisweekly.com

# ԼՈՒՐԵՐ

## ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԷԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՉԵՆ ԹՈՂՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

*Հայ փորձագէտների գնահատմամբ՝ Նոյեմբեր 6-ին Ադրբեջանում կայացած խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքները էական ազդեցութիւն չեն թողնի ղարաբաղեան բանակցութիւնների վրայ:*

*«Խոշոր հաշուով ոչինչ էլ չի փոխուի, որովհետեւ Ադրբեջանում իշխանութիւնը չփոխուեց, նոյնիսկ՝ իշխանութեան ներսում ոչինչ չփոխուեց: Կարճատեւ հեռանկարում հակահայկական հռետորութիւնը, թերեւս, փոքր-ինչ թուլանայ, որովհետեւ վերջին շրջանում ադրբեջանական իշխանութիւնները ընտրութիւնների շեմին էին: Սակայն լուրջ փոփոխութիւններ Ադրբեջանի արտաքին քաղաքականութիւնում տեղի չեն ունենայ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց Կովկասի ինստիտուտի տնօրէն Ալեքսանդր Իսկանդարեանը:*

*Միեւնոյն ժամանակ, քաղաքագէտը կարծիք յայտնեց, որ Ադրբեջանում Ալիեւ-կրտսերի վարչակազմին աւանդաբար ընդդիմադիր տրամադրուած ուժերի կը շարունակեն թուլանալ, ինչը տեսանելի եղաւ նաեւ այս ընտրութիւնների արդիւնքում՝ ճանապարհ բացելով այդ երկրում իսլամական շարժման ձեւաւորման համար:*

*Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի փորձագէտ Մանուէլ Սարգսեանը համաձայն է. - «Դատելով նախընտրական շրջանում Ադրբեջանում ղարաբաղեան հարցի վերաբերեալ հնչող յայտարարութիւններից՝ շօշափելի փոփոխութիւններ հարցի առնչութեամբ կամ Հայաստանի նկատմամբ տարուող քաղաքականութիւնում, ես չեմ կանխատեսում»:*

*Փորձագէտի կարծիքով, սակայն, եթէ այս ընտրութիւնների արդիւնքում Ադրբեջանում քաղաքական լարում ստեղծուի, ինչ-ինչ փոփոխութիւններ կարող են տեղի ունենալ, թէեւ՝ «ինչ էլ պատահի այս երկրում, ես կարծում եմ պատերազմի դրօշը միակ դրօշն է, որով Իլհամ Ալիեւը շարունակելու է իր քաղաքականութիւնը»:*

*Ստեփանակերտում գործող Արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հանրային խորհրդի նախագահ Մասիս Մայիլեանի խօսքով, Լեռնային Ղարաբաղում, ամէն դէպքում, չեն սպասում, թէ որեւէ ընտրութիւն Ադրբեջանում կարող է փոփոխութիւն առաջացնել ղարաբաղեան հարցում այդ երկրի դիրքորոշման մէջ:*

## ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆ. ՈՐԱԿԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԵՆՔ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԵՆՔ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ



*Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան*

*«Այսօր մենք առանց մի որեւէ երրորդ ուժի կամ ուժերի հաւասարակշռութեան, ոչ թէ քանակական, այլ որակական ու մարտական ոգու շնորհիւ է, որ կարողանում ենք ոչ պատերազմ-ոչ խաղաղութիւն իրավիճակում պահպանել հրադադարը եւ եթէ լինում են ինչ-որ սադրանքներ, ապա արժանի հակահարուած տալ»,- այս մասին յայտարարել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը, «Հ1»-ին տուած հարցազրոյցում, անդրադառնալով նրան, որ Ադրբեջանը մշտապէս հպարտանում է իր ռազմական բիւջէի թռիչքաձեւ աճով:*

*«Ադրբեջանի ղեկավարութիւնն այսօր սպառազինութիւնների քանակական աւելացումների շնորհիւ փորձում է հասնել ինչ-որ առաւելութեան մեր զինուած ուժերի նկատմամբ, բայց դրանք չեն այն կարեւոր յատկանիշները, որոնք բերում են զինուած ուժերի մարտունակութեան բարձրացմանը, որովհետեւ առաջին հերթին կան հակազդող շատ մեթոդներ ինչպէս դասական, այնպէս էլ ասիմետրիկ, որոնք կը բերեն նրան, որ մենք կը չէզոքացնենք նրանց հնարաւորութիւնները»,- նշել է նախարարն ու յաւելել. «Մեր զինուած ուժերի մարտական պատրաստութեան, պատրաստականութեան, ընդհանուր առմամբ՝ պաշտպանական բարեփոխումների ողջ ընթացքը, բարոյահոգեբանական վիճակը, ինչպէս նաեւ միջազգային խնդիրների կատարման՝ մեր պատասխանատու մօտեցումները խօսում են նրա մասին, որ մենք հակառակորդի զինուած ուժերի նկատմամբ ունենք գերազանցութիւն: Դրան նպաստում է նաեւ այն, որ բարձր է մեր զինծառայողների մարտական ոգին: Նորից եմ ուզում կրկնել՝ յատկապէս առաջին գծում, որովհետեւ մենք մեր երկիրն ենք պաշտպանում, մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում, եւ մենք անելու ենք ամէն ինչ, որպէսզի մեր ժողովրդի այսօրուայ անվտանգութիւնը պատշաճ մակարդակի լինի, եւ նրանք կարողանան իրենց խաղաղ արարումն իրականացնել»:*

## ԹԲԻԼԻՍԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ԿԱՍԿԱԾԱՆՔՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ ԲԱՆԱԿՑԵԼ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԵՏ

*Վրաստանի արտգործնախարարի տեղակալ Նինօ Կալանդաձէն յայտարարել է, որ Վրաստանը պատրաստ է Ռուսաստանի օգտին լրտեսութիւն անելու կասկածանքով ձերբակալուած ՌԴ քաղաքացիների հարցով բանակցութիւններ վարել ռուսական կողմի հետ: Այս մասին յայտնում է «Ռիա Նովոստին»:*

*Յիշեցնենք, որ Վրաստանի ՆԳՆ-ի տարածած հաղորդագրութեան համաձայն, Վրաստանի ՆԳՆ հակահետախուզական վարչութեան կողմից իրականացուած «Էնվեր» գործողութեան արդիւնքում Վրաստանում յայտնաբերուել եւ ձերբակալուել են Ռուսաստանի յատուկ ծառայութիւնների հետ համագործակցող մի խումբ անձինք:*

*4-ամեայ աշխատանքի արդիւնքում Վրաստանի իրաւապահ մարմինները 15 մարդ են ձերբակալել, որից 2-ը դատավարական գործարքի արդիւնքում ազատ են արձակուել:*

*Ձերբակալուած 13 անձանցից 4-ը՝ «Սեյբոլթ» ընկերութեան վրացական մասնաճիւղի գլխաւոր տնօրէն Արմէն Գէորգեանը, «Սեյբոլթ» ընկերութեան գլխաւոր տնօրէնի տեղակալ Ռուբէն Շիկոեանը, գործարար Պետրէ Դեւրիշաձէն եւ Եուրի Սկրիլնիկովը, որոնք ենթադրւում է, որ կապ են ունեցել ՌԴ ՊՆ Գլխաւոր շտաբի հետ, ՌԴ քաղաքացիներ են:*

*«Մենք պատրաստ ենք բանակցութիւններ վարել այս հարցի շուրջ,- ասել է Կալանդաձէն՝ նշելով, որ ռուսական կողմն արդէն իսկ Շուէյցարիայի դեսպանութեան միջոցով խնդրել է տեղեկութիւն տրամադրել իր քաղաքացիների մասին եւ յայտնել նրանց տուեալները՝ հիւպատոսական գործողութիւններ իրականացնելու համար:*

*Անդրադառնալով Ռուսաստանի քաղաքացիներին Ռուսաստան վերադարձնելու հարցին՝ Կալանդաձէն նշել է, որ այդ հարցը կը քննարկուի բանակցութիւնների ժամանակ եւ «այն իրար մէջ կը լուծեն երկու կողմերի իրաւապահ մարմինները»:*

## «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀԱՍՆՈՒՄ Է ԱՀՌԵԼԻ ՏԵՄՊԵՐԻ» ԱՀԱԶԱՆԳՈՒՄ ԵՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

*Նոյեմբերի 10-ն Երիտասարդութեան համաշխարհային օրն է: Շնորհաւորելով հայ երիտասարդներին՝ Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնն արձանագրում է.*

*1. Հայաստանի երիտասարդական քաղաքականութիւնը չի տարածուել եւ չի տարածւում երիտասարդական լայն շերտերի վրայ, այլ ընդգրկում է այսպէս կոչուած «արտօնեալ խաւին»: Չկայ համակարգուած երիտասարդական քաղաքականութիւն, որը ամուր կը կապի հայ երիտասարդին իր Հայրենի հողին:*

*2. Վերջին երկու տասնամեակներում երիտասարդների արտագաղթը Հայաստանից հասնում է ահռելի տեմպերի, ինչն ուղղակիօրէն վտանգում է մեր երկրի ազգային անվտանգութիւնը:*

*3. Հայաստանում մնացած երիտասարդների մի ստուար հատուած չի կարողանում աշխատանք գտնել՝ այսկերպ իր հանապազօրեայ հացը վաստակելու համար:*

*4. Բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ աւարտած երիտասարդներից շատերը հնարաւորութիւն չունեն իրենց մասնագիտական կրթութեամբ զբաղուածութիւն գտնել եւ ստիպուած են լինում Հայրենիքից դուրս աշխատանքի տեղաւորման մասին մտածել:*

*Զնայած այս ամէնին, Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութիւնը շնորհաւորում է Հայ երիտասարդին տօնի կապակցութեամբ, ինչպէս նաեւ յիշեցնում բոլորին, որ երիտասարդութիւնն է հասարակութեան շարժիչ ուժը, որի նկատմամբ հոգածութիւնը, պետական իրական քաղաքականութեան մշակումն օրուայ հրամայականն է:*

***Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տխրունի» ուսանողական երիտասարդական միութիւն***
***10.11.2010***

## ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐԱ ՍԱՐԱՖԵԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*րութեան թեկնածուն է: Ինք հիմնադիրն ու տնօրէնն է Լոնտոնի Կոմիտաս հիմնարկին, որուն առաջադրանքն է հետազօտութիւններ կատարել եւ ի մի հաւաքել արդի հայոց պատմութեան հետ առնչութիւն ունեցող գիրքեր եւ հրատարակութիւններ: Այս հիմնարկութիւնն առաւելաբար ծանօթ է Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ իր մէկտեղած վաւերաթուղթերով:*

*Արա Սարաֆեան առաւելաբար հանրածանօթ է իր հրատարակութիւններով, որոնք ընդհանրապէս փաստագրային եւ պատմավաւերական բնոյթ կը կրեն: Ունի նաեւ Հայոց ցեղասպանութեան հետ աղերս ունեցող խիստ շահեկան թարգմանութիւններ:*

*Իր վերջին գործն է «Աղթամար՝ Միջին Դարու Հայ ճարտարապետութեան գոհար մը»: Այս գիրքը միասնաբար հրատարակողներն են Կոմիտաս Հիմնարկութիւնը (Լոնտոն) եւ «Պիր Զամանլա Եանեճըլըք» հրատարակչատունը (Իսթանպուլ), որուն մէջ թուրք ընթերցողին կը ծանօթացուի Աղթամարն ու 10րդ դարու Ս. Խաչ Եկեղեցին:*

*Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել (818) 545-9049 կամ info@armeniancouncil.org*

## ՀԱՅԵՐ ՓՈՐՁԱԾ ԵՆ ՀԱՐՍՏԱՑՈՒԱԾ ՈՒՐԱՆ ՎԱՃԱՌԵԼ

*Շարունակուած էջ 1-էն*

*գաղտնի գործակալ: Տոնոեան ու Սմբատեան գործակալին ըսած են նաեւ, որ իրենց մօտ եղած 18 կրամ ուրանը պարզապէս նմուշ է, եւ իրենք ունին աւելի մեծ քանակութեամբ:*

*Երկուշաբթի, Նոյեմբեր 8-ին Հայաստանի Անվտանգութեան Ծառայութիւնը տեղեկցուցած է որ, ձեռբակալուած է Գագիկ Տէտէեան անունով անձ մը, որպէս կասկածեալ ուրանի մատակա-րարման մէջ:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

# ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱ՞Ր, ԹԷ՞

## ԿԱՍԿԱԾՆԵՐ ԿԱՆ, ՈՐ ԲԱՆԱԿՈՒՄ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԱՀԱԲԵԿՄԱՆ ԱՐԴԻՒՆՔՈՒՄ ԵՂԱԾ ՄԱՀՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ ԿՈԾԿՒՈՒՄ ԵՆ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԿԱՄ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

*ԳԱՅԵԱՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ*

*Արդէն երեք տարի է՝ ամուսիններ Գոհար եւ Սուրէն Օհանջանեանները փորձում են պարզել՝ ինչու եւ ինչից է մահացել իրենց որդին՝ Տիգրան Օհանջանեանը:*

*Տիգրանը հայկական բանակում ծայր առած ինքնասպանութիւնների եւ դժբախտ պատահարների ալիքի տասնեակ երիտասարդ զոհերից մէկն էր միայն:*

*Տիգրանը զոհուել է 2007 թ. Օգոստոսի 30-ին Հայաստանի Գեղարքունիքի մարզի Կարճաղբիւր գիւղի զօրամասում: Ըստ հինգ հատորանոց քրէական գործի՝ Տիգրանը ժամը 23:00-ի սահմաններում դուրս է եկել զինուորական մասից, կպել է զօրամասի կապի հանգոյցի մօտ տեղակայուած ալեհաւաքը պահող ձգալարին եւ էլեկտրահարուել: Սակայն, պաշտօնական վարկածը, որին չեն հաւատում նաեւ ծնողները, առ այսօր չի ապացուցուել:*

*Որդեկորոյս ծնողները համոզուած են, որ տղային ծեծել են, գուցէ նաեւ խեղդել, իսկ յետոյ վզի վէրքն էլեկտրահարել, որպէսզի վերացնեն սպանութեան հետքերը եւ դարձնեն դժբախտ պատահար:*

*«Մահուանից երեք տարից անց էլ չեն կարողանում քրէական գործն ապացուցել, որ իբր Տիգրանը դժբախտ պատահարի զոհ է դարձել, - ասում է Տիգրանի մայրը՝ Գոհար Օհանջանեանը: - Ես անգամ ՊՆ նախարարի հետ հանդիպման ժամանակ ասել եմ՝ կամ բացայայտէք իմ երեխու սպանութիւնը, կամ ասէք՝ չէք կարող, ես իմ երեխու շիրիմը քանդեմ, դիակը վերցնեմ ու գնամ»:*

*«Տղայիս, ինչպէս իր ընկերներն են պատմում, ժամը 20-ի մօտերքը կանչել են առանձնազրոյցի: Քանի որ 110 կգ քաշով սպորտսմէնին մի քանի զինծառայող ծեծել չէր կարող, դրսից մարդ է կանչուած եղել: Սա արդէն խմբակային սպանութիւն է, որն էլ փորձում են քննիչներն ու դատախազութիւնը թաքցնել», - ասում է զինուորի հայրը՝ Սուրէն Օհանջանեանը, ում մի քանի անգամ ահաբեկել ու սպառնացել են անծանօթ մարդիկ, ասելով, որ կը վերացնեն ողջ ընտանիքը, եթէ շարունակեն «խորանալ տղայի սպանութեան մէջ»:*

*«Եթէ էլեկտրահարուել է իմ որդին, ո՞վքեր եւ ինչո՞ւ են մեզ սպառնում: Ես ասում եմ, որ հայկական բանակը՝ բարդակ է: Եթէ բարդակ չլինէր, ինչ գործ ունէր իմ երեխեն այդ ժամին դրսում», - ասում է Տիգրանի մայրը:*

*Բանակային ռեֆորմների օգտին հանդէս եկող մասնագէտները նշում են, որ Տիգրանի դէպքից երեք տարի անց էլ դժբախտ դէպքերը հայկական բանակում, որոնք յաճախ որակւում են «ինքնասպանութիւն կամ դժբախտ պատահար», չեն նուազում:*

*Ըստ Պաշտպանութեան նախարարութեան կայքէջի տուեալների՝ այս տարուայ Յունիսի 27-ից Հոկտեմբերի 3-ը ընկած ժամանակահատուածում հայկական բանակի տարբեր զօրամասերում ինքնասպան եղել կամ դժբախտ պատահարների զոհ են դարձել 9-ը պայմանագրային եւ ժամկետային զինծառայող:*

*Ողբերգական դէպքերը, որոնք բարձրացրին հասարակութեան դժգոհութիւնը բանակի նկատմամբ, հնչեցին ՊՆ նախարարի հրաժարականի կոչեր:*

*Ելոյթ ունենալով Հայաստանի խորհրդարանում՝ ՊՆ նախարար Սեյրան Օհանեանը յայտարարեց, որ զինուած ուժերում միջադէպերն ու արտակարգ դէպքերն այնքան էլ շատ չեն, ուղղակի դրանք չափից դուրս մեծ հանրային արձագանք են գտնում:*

*«Ես չեմ կարծում, թէ ստեղծուած իրավիճակում ճիշտ էր պաշտպանութեան նախարարութեան դէմ նման լայնածաւալ արշաւ կազմակերպելը: Զինուորների մահուան ամէն մի առանձին դէպքում քրէական գործ է յարուցուել: Զինուած ուժերում լուրջ քայլեր են կատարւում՝ կանխելու նման դէպքերը: Ես անձամբ հանդիպում եմ զոհուած զինուորների հարազատների հետ», - հաւաստիացրել է Օհանեանը:*

*Հելսինկեան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցն ասում է, որ յունուարից մինչ այսօր արձանագրել են զինուորի 31 մահուան դէպք, որից ութը եղել է հրադադարի խախտման պայմաններում: Այսինքն, այդ մահերը եղել են դիպուկահարների կրակոցներից՝ ղարաբաղա-ատրպէյճանական սահմանային շփման գօտում:*

*Ըստ Սաքունցի՝ մտահոգիչը մահացութեան դէպքերի աճի կամ նուազման դինամիկ չէ, այլ այն, որ ամէն մի մահացութեան դէպքի վերաբերեալ վստահելի, համակողմանի, օբյեկտիւ քննութիւն չի կատարւում, եւ հարցերին յստակ պատասխաններ չեն տրւում, ինչը մեծացնում է տագնապը հասարակութեան շրջանում:*

*Բազմաթիւ անպատասխան հարցեր ու հասարակութեան բողոք առաջացրեց նաեւ Յուլիսի 27-ին լեյտենանտ Արտակ Նազարեանի սպանութիւնը, որը նախապէս ինքնասպանութիւն էր որակուել:*

*Պաշտպանութեան նախարարին ուղղուած նամակում Նազարեանի մայրը՝ Յասմիկ Յովհաննիսեանը գրել էր. «Իմ որդուն սպանել են: Սպանել են մտածուած, սառնասրտօրէն, հաշուարկով: Այդպիսի գազանները չարիք են եւ ծնունդ են անպատժելիութեան մթնոլորտի: Նրանք սովորական մարդասպաններ չեն, նրանք հայրենիքի դաւաճաններ են, որոնք սահմանի վրայ գազանաբար սպանում եւ ոչնչացնում են սահմանապահ սպային»:*

*Բողոքի յաջորդ ալիքը բարձրացաւ, երբ ինտերնետային «youtube» կայքէջում յայտնուեց մի տեսագրութիւն, որտեղ երեւում էր, թէ ինչպէս մի զինծառայող դաժան ծեծի է ենթարկում եւ ստորացնում հայկական ԶՈՒ համազգեստով երկու երիտասարդների: Տեսանիւթը արագօրէն տարածուեց նաեւ այլ կայքերում եւ սոցիալական կայքերում:*

*Մարդու իրաւունքների ակտիւիստների խօսքերով՝ բանակում ահաբեկման դէպքերը քննութեան չեն ենթարկվում զինուած ուժերի շրջանում կամքի բացակայութեան պատճառով:*

*«Խաղաղ պայմաններում բանակում տեղի ունեցած զոհերի պատասխանատուները հիմնականում չեն ենթարկւում պատասխանատուութեան, յաճախ քաւութեան նոխազ են դառնում թոյլ օղակները, դատապարտւում են անմեղները, գործերը կոծկւում են, սա էլ ծնում է նոր յանցագործութիւններ», - ասում է Հայաստանի Հելսինկեան կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեանը:*

*Հայաստանի Մարդու իրաւունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենեակը վերջին ինն ամիսների ընթացքում պաշտպանութեան նախարարութեան գործունէութիւնից բողոքող 39 դիմում է ստացել:*

*«Բանակը պէտք է զբաղուի այդ խնդիրներով, բայց մենք եւս պէտք է զբաղուենք հասարակութեան ընդհանուր առողջացմամբ: Եթէ դա տեղի չունենա, ապա բանակն իր միջոցներով չի կարող արմատախիլ անել այն երեւոյթները, որոնք գոյութիւն ունեն հասարակութիւնում», - ասում է ՄԻՊ Արմէն Յարութիւնեանը:*

*Ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրեսը (ՀԱԿ) տեսանիւթում պատկերուածը որակել էր «դաւաճանութեան ծանրագոյն յանցանք»՝ նշելով, որ նման անմարդկային նուաստացման ենթարկուած ցանկացած բանական մարդ, առաւել եւս 18-19 տարեկան երիտասարդ, կարող է դիմել ե՛ւ ինքնասպանութեան, ե՛ւ սպանութիւն, ե՛ւ գերադասել փախուստը հակառակորդի մօտ:*

*«Բանակը ոչնչացւում է», - նշուել է ՀԱԿ-ի յայտարարութեան մէջ:*

*Նախագահ Սերժ Սարգսեանը, անդրադառնալով բանակում վերջին շրջանում իրար յաջորդած դէպքերի լուսաբանմանը, մեղադրել է ընդդիմադիր օղակներին այս ողբերգութիւնը քաղաքական միաւորներ վաստակելու նպատակով օգտագործելու մէջ.*

*«Այդ երեւոյթին շատ վատ եմ վերաբերւում՝ ոչ թէ այն երեւոյթին, որ բանակի մասին շատ է գրւում, շատ է խօսւում, այլ այն երեւոյթի մասին, որ կոչւում է բանակի պախարակում՝ ելնելով զուտ քաղաքական, նեղ-անձնական, կուսակցական շահերից»:*

*Ըստ Նախագահ Սարգսեանի՝ հայկական բանակը երբեք զերծ չի եղել պատահարներից:*

*«Բանակում չեն եղել տարիներ, երբ զինուոր չզոհուի, սպայ չմահանայ, դժբախտ պատահար տեղի չունենայ, որովհետեւ մեր բանակը հսկայական, մեծ կառոյց է, մեր բանակը գործող բանակ է, եւ վերջապէս՝ իւրաքանչիւր բանակ հանդիսանում է հասարակութեան անբաժան մասը», - ասել է երկրի նախագահը:*

*Ներկայում խորհրդարանում քննարկւում է ՊՆ-ի առաջարկած ՀՀ զինուած ուժերի կարգապահական կանոնագիրքէ օրէնքի նախագիծը:*

*Օրինագիծը, որը Սեպտեմբերին լսումներ է անցել Ազգային ժողովում՝ յստակեցնում է առաջին հերթին կարգապահական տոյժի տեսակները՝ըստ զինուած ուժերի համապատասխան կազմի՝շարքային, ենթասպայական եւ սպայական, նաեւ խրախուսանքի տեսակները:*

*Կայ նաեւ սահմանուած նոր դրոյթ, որպէսզի զինուորները չկատարեն այնպիսի հրամաններ, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրութեանն ու օրէնքներին: Յստակեցուելու են հրամանատարների լիազօրութիւններն ու պարտականութիւնները, ինչպէս նաեւ զինուորների իրաւունքներն ու պարտականութիւնները:*

Գայանէ Մկրտչեանը Արմենիանաու ինտերնետային պարբերականի լրագրող է:

Յօդուածն արտատպւում է Պատերազմի եւ խաղաղութեան լուսաբանման ինստիտուտի «Կովկասեան լրատու» պարբերականից: (www.iwpr.net)



*Տիգրան Օհանջանեանի ծնողները*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27: ԵՐԲ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԼԽԱՏՈՒԵՑ

ԳԱՅԻԱՆԷ ԱՌՈՒՍՏԱՄԵԱՆ



Ուղիղ 11 տարի առաջ այս օրը Հայաստանն ընկղմուեց խաւարի մէջ՝ Ազգային ժողովում տեղի ունեցաւ մի այնպիսի կոտորած, որից յետոյ ժամանակը պիտի չափագրուէր մինչ այդ օրն ու դրանից յետոյ տրամաբանութեամբ:

Յետոյ, իհարկէ, շատ պիտի ջանք թափէին այդ խաւարում մարդաորսի ելածները, որ դիպուածին տրուի «Մի խումբ ռոմանտիկներ մտան Ազգային ժողով» անուանումն ու պարտակուի:

Այդ «ռոմանտիկները»՝ Կարէն Յունանեանը, Վռամ Գալստեանը, Դերենիկ Բեջանեանը, Էդիկ Գրիգորեանը եւ Աշոտ Կնեազեանը՝ Նայիրի Յունանեանի գլխաւորութեամբ, յստակ հաշուարկած լինելով, որ Ազգային ժողովում հարց ու պատասխանի օրն է ու կառավարութիւնը Վազգէն Սարգսեանի գլխաւորութեամբ պէտք է ներկայանայ, պատասխանելու պատգամաւորների հարցերին, 1999 թուականի Հոկտեմբերի 27-ին շատ հանգիստ, առանց որեւէ խոչընդոտի, ԱԺ լրատուական ծառայութեան աշխատակցի երաշխաթղթով մտան խորհրդարան ու գնդակահարեցին ԱԺ նախագահ Կարէն Դեմիրճեանին, ՀՀ վարչապետ Վազգէն Սարգսեանին, ԱԺ փոխնախագահներ Եուրի Բախշեանին, Ռուբէն Միրոյեանին, պատգամաւորներ Միքայէլ Քոթանեանին, Հենրիկ Աբրահամեանին, Արմենակ Արմենակեանին եւ օպերատիւ հարցերի նախարար Լէոնարդ Պետրոսեանին:

Նայիրի Յունանեանի այդ քայլը նոյնիսկ այն պահին, երբ բոլորը շոկի մէջ փորձում էին ընկալել տեղի ունեցածը, յստակ մատնում էր շատ կոնկրետ ծրագրի առկայութիւնը: Այդ ծրագրի մասին վարկածը պիտի հաստատուէր նրա նկատմամբ իրականացուող դատաքննութեան ընթացքում: Այդ օրը նա պիտի կոչով դիմէր ԱԺ-ի մօտ հաւաքուած ժողովրդին, դահլիճ հրաւիրէր մինչ այդ պահը ինքն իրեն ալբանացի համարող դեկորատիւ կիրառական նախագահ, այդ պահից յետոյ երկրի միակ տէրն ու տնօրէնը դարձած Ռոբերտ Քոչարեանին ու նա Յունանեանին պիտի նշանակէր ժամանակաւոր կառավարութեան ղեկավար: Այսպիսին էր ծրագիրը:

Նայիրի Յունանեանն իր հետ ԱԺ էր բերել օրէնքների նախագծեր ու որոշումներ, որոնք պիտի այդ օրն ընդունուէին: ԱԺ դահլիճում սփռուած դիակների ու վախից միզապարկերը թուլացած որոշ պատգամաւորների շրջապատում Նայիրի Յունանեանը մի քանի ժամ շարունակ դրսից ինչ-որ ուժերի օժանդակութեան էր սպասում եւ երբ հասկացաւ, որ իրեն գցել են ու ժամանակաւոր կառավարութեան ղեկավարի պաշտօնում չեն նշանակելու, յանձնուեց:

### ԱՅԴ ՕՐՈՒԱՆԻՑ ՄԻՆՉ ՕՐՍ ՌՈՄԱՆՏԻԿ ՄԵՌՆՈՒՄ ԵՆՔ

Յիշեցնենք՝ Ռոբերտ Քոչարեանը երկրի նախագահն էր, Սերժ Սարգսեանը՝ Ազգային անվտանգութեան նախարարը: Նորմալ երկրներում նման դէպքից յետոյ նախարարը հրաժարական կը տար, իսկ նախագահին այդ նոյն խորհրդարանը անվստահութիւն կը յայտնէր: Մերը նորմալ չէր ու Սերժ Սարգսեանը ոչ միայն հրաժարական չտուեց, այլեւ արդարացաւ, թէ այդ օրը հանրապետութիւնում չի եղել, Քոչարեանն էլ՝ թէ. թրաշուած չեմ եղել ու սա դարձաւ այն երկաթեայ ալիբին, որ պիտի թոյլատրէր յետագայ շաբաշը՝ անտէր երկրում: Բա ո՞ւր մնաց ռոմանտիկան: Պարզուեց, որ Նայիրի Յունանեանինը մէկանգամեայ օգտագործման է: Այլապէս ժողովրդի ճակատագրով մտահոգուածը յաջորդիւ էլ կը յայտնէր իր մտահոգութիւնները՝ բանտից տեղեկութիւններ կը հաղորդէր իր սիրելի ժողովրդին առ այն, որ մինչ օրս էլ նրա «արիւնը ծծում են» ու ինքը, ցաւօք, էլ կոտորած չի կարող կազմակերպել, բայց զօրակցում է նրան ու յորդորում, որ պայքարի արնակերների դէմ:

### ՆՈՐԱԳՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԳԵՆԴՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

«Մեղադրանք առաջադրելիս նկատի ունեցէք, որ եթէ մեղադրանքի ծաւալը չբխի գործից եւ նախկինի պէս ակնյայտ կեղծուի, ապա վերջում կարող է դուրս գալ, որ դուք ձեզ էք մեղադրանք առաջադրել: Իմ առջեւ քայլը ձերն է, իմ քայլը կախուած կը լինի ձեզանից եւ անշուշտ համարժէք: Յիշէք ժողովրդական խօսքը՝ ինչ-որ ցանես, այն էլ կը հնձես»,- ՀՀ նախագահ Քոչարեանին գրել էր Նայիրի Յունանեանը: Նրա ու միւսների նկատմամբ իրականացուող դատաքննութիւնը ձգձգուեց այնքան, մինչեւ Հայաստանում վերանայ մահապատժի մասին օրէնքի պահանջը: Հակառակ պարագայում նրան պիտի գնդակահարէին ու գնդակահարուելուց առաջ Նայիրի Յունանեանը կը յայտնէր պատուիրատուի անունը, ինչպէս եւ սպառնում էր դատաքննութեան ողջ ընթացքում: Իր սեւ գործն արածի ճակատագրով, նա պիտի յայտնուէր ԱԱ հսկողութեան տակ:

Յունանեան եղբայրներին, ասում են, մինչ օրս պահում են ԿԳԲ-ի շէնքում յարմարեցուած բանտախցում, առօք-փառօք, ինչպէս հինգաստղանի հիւրանոցի համարում: Նրան ոչ ոք չի տեսել: Նրա բանտարկելու օրից մինչ օրս անձամբ բազմաթիւ անգամներ դիմել եմ պատկան մարմիններին, Նրա բանտախուց այցելելու նպատակով, թէկուզ միայն տեսնելու եւ հաւաստիանալու համար, որ կրում է պատիժը: Մերժել են: Ու քանի որ նրան ոչ ոք չի տեսել, հասարակութեան մէջ չեն դադարում այն գրոյցները, որ Նայիրի Յունանեանին վաղուց վճարել ու բաց են թողել եւ նա հիմա վայելում է իր «երեսուն արծաթը»:

Իսկ ահա միւս ռոմանտիկների բանը բուրդ եղաւ: 6-ից երեքը մեռան բանտում: Վերջինը իր կեանքը աւանդեց այս տարուայ Մայիսի 15-ին, ժամը 19:00-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկում: Պաշտօնական տեղեկատուութիւնը զուժեց. «Իր անկողնում յանկարծամահ է եղել 1999թ. Հոկտեմբերի 27-ի դէպքերի առթիւ 14 տարի ազատազրկման դատապարտուած Համլետ Ստեփանեանը»: Նրա պատժի ժամկէտը լրանալու էր 2012-ին: «Նուբարաշէն» ՔԿՀ-ում հասարակական վերահսկողութիւն իրականացնող դիտորդական խմբի անդամներին մահացածի խցակիցները յայտնել են, որ ճաշից մօտ կէս ժամ անց Ստեփանեանն իրեն վատ է զգացել, պառկել ու խուխուոցի ձայներ արձակել:

### ԳԱԳԻԿ ՃՀԱՆԳԻՐԵԱՆ

Հոկտեմբերի 27-ի գործի քննութեան հսկողութիւնը յանձնարարուած էր Գագիկ Ճհանգիրեանին, որն այն ժամանակ զինուորական դատախազն էր: Նախաքննութեան ողջ ընթացքում Հայաստանում չկար մարդ, որ չգիտենար, որ այդ գործը չի բացայայտուելու եւ որ իշխանութիւնները յստակ ուղղորդում են նախաքննական մարմնին: Գագիկ Ճհանգիրեանն այդ մասին ասել էր դեռեւս 2000 թուականին: «Ինչո՞վ քննութիւնն ուղղորդելու փորձ չէ, երբ բարձրաստիճան պաշտօնեաները եւ կուսակցութեան ղեկավարները հրապարակաւ կարծիք են յայտնում, որ յանցագործութիւնը կատարել են միայն այդ հինգը եւ քննչական խումբը դրսում իզուր է մարդ որոնում»:

Յիշեցնենք, որ Յունանեանի ու միւսների գործից անջատուած մաս կար, այն վերաբերում էր պատուիրատուներին ու այդ մասը կարճեցին: Յետագայում արդէն, երբ Գագիկ Ճհանգիրեանը ներկայացաւ Ազատութեան հրապարակում բռնակալութեան դէմ պայքարող ժողովրդին ու անդրադարձաւ այդ թեմային, կրկնեց վերոնշեալը: Իսկ արդէն բանտում, 2008-ի Նոյեմբերի 27-ին «Ա1+»-ին տուած հարցազրոյցում ասաց՝ «Ես այն ժամանակ, եւ հիմա, եւ ապագայում, միշտ այն կարծիքին եմ լինելու, որ «Հոկտեմբերի 27-ը» կազմակերպուած, յստակ ծրագրա-

Շար.ը էջ 19



# ՔՍԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՅՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԵՏ՝ ԳԵՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԷՋ ՅԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ՆԱԽԱԳԱՅ ՕՊԱՄԱՅԻ ՅԵՏ

Երկուշաբթի Նոյեմբեր 1-ին՝ ընդառաջելով Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահ Պարաք Օպամայի հրաւէրին՝ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Ամերիկայի 20 բարձրաստիճան հոգեւորական առաջնորդներուն հետ՝ Սպիտակ Տան մէջ հանդիպում ունեցաւ Նախագահին հետ:

MACVF's past contributions include a joint effort with UNICEF, the MoH, and the Rostropovich Foundation, to eliminate measles, mumps, and congenital rubella. This effort included a mass immunization campaign of approximately 924,000 individuals. Additionally MACVF was instrumental in its long lasting support to the MoH by financing routine, life-saving immunization vaccines which has enabled the immunization of thousands of children in Armenia since the inception of the program.

MACVF has been and continues to be vital in introducing life-saving vaccines for the NIP's regular vaccination programs. Adding the Pentavalent vaccine to the NIP, will compliment Armenia's public health achievements since independence and be part of GAVI's global effort to prevent 1 million deaths until the year 2015.

Millennium Armenian Children's Vaccine Fund (MACVF) is one of the primary programs of the Ani & Narod Memorial Foundation. MACVF is a public-private capital fund incubated around the year 2000 in partnership with international agencies including UNICEF, the U.S. Agency for International Development (USAID), and various constituents of the Armenian Diaspora, to ensure a steady stream of income to finance vaccines for Armenia's NIP. ANMF was established in 1994 in loving memory of Ani and Narod Ardhaldjian (visit www.ani.org).

The GAVI Alliance is a public-private partnership focused on saving children's lives and protecting people's health by increasing access to immunization in poor countries.

The National Immunization Program of Armenia is carried out by the Communicable Diseases, State Hygeine and Anti-Epidemic Inspectorate of the Ministry of Health. NIP unites and coordinates institutions, resources, and activities, which promote the reduction of morbidity, disability, and mortality as a result of manageable infections. This large-scale program is also responsible for the procurement and distribution of vaccines to polyclinics and health institutions throughout the country. According to the WHO, the NIP of the MoH of Armenia has retained high coverage rates for its vaccination programs.

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԱՐՑԱԽ

Գ. ՋՈՒԼՀԱԿԵԱՆ

Մի խումբ նուիրեալների՝ Հայաստանի ազգային գրադարանի տնօրէն Դաւիթ Սարգսեանի, արձակագիր Վանուշ Շերմազանեանի, բարեգործ Արմէն Դաւթեանի, պատմական գիտութիւնների դոկտոր Կիմ Ղահրամանեանի ջանքերով օրերս ԼՂՀ պետական համալսարանում տեղի ունեցաւ Կ. Ղահրամանեանի եռալեզու (հայերէն, ռուսերէն, անգլերէն) «Վաչագան Թագաւորի սահմանադրութիւնը, իրաւակարգի ակունքները ԼՂՀ-ում» գրքի շնորհանդէսը: Մասնակցում էին համալսարանի դասախօսական կազմը, պետական, քաղաքական գործիչներ, ԼՂՀ մշակոյթի նախարար Նարինէ Աղաբալեանը: Միջոցառումը բացման խօսք ասաց համալսարանի ռեկտոր Ստեփան Դադաեանը:

ՀԱԳ տնօրէն Դաւիթ Սարգսեանն իր ելոյթում կարեւորեց գիրքը՝ որպէս փաստաթուղթ, վկայագիր, որ փաստում է, եւս մէկ անգամ հաստատում, որ Արցախը պատմական Հայաստան է, հերքում է թէ՛ ադրպէյճանական, թէ՛ թրքական կեղծ տեղեկութիւնները, իբր հայերը գաւթել են Արցախը:

- Քարոզչական աշխատանքներ են տանում ադրպէյճանցիները, որոնք, ցաւօք, թափանցում են նաեւ միջազգային տարբեր կազմակերպութիւններ: Այս գիրքը եւս մէկ անգամ հերքում է այդ զազրելի սուտը: Նման գրքերը խիստ անհրաժեշտ են յատկապէս քարոզչական ոլորտում, որ, ի լուր աշխարհի, իրաւունք ունենք յայտարարելու. Արցախը 1500 տարի առաջ էլ ունեցել է սահմանադրութիւն, ապրել է քաղաքակիրթ կանոններով,- ասաց Դ. Սարգսեանը:

Կիմ Ղահրամանեանը ներկայացրեց գիրքը, Սահմանադրութեան կարեւորութիւնը՝ որպէս պատմական փաստաթղթի: Նա խօսեց այն մասին, թէ ինչպէս 1500 տարի առաջ Արցախում մտահոգուել են պետական, իրաւական կարգի սահմանադրական կանոններ ստեղծելու մասին: Եւ Վաչագան Թագաւորը սահմանադրութեան իր նախագիծն ուղարկել է հոգեւոր, պետական բոլոր այրերին՝ քննարկելու այն, որպէսզի հռչակուող Սահմանադրութիւնը լինի օրինական եւ բխի բոլորի շահերից, որով ընթերցողներին, հասարակութեան բոլոր խաւերին տեղեկացւում է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում իրաւակարգի ակունքներն սկիզբ են առնում 5-րդ դարից: Բանախօսը նշեց, որ Վաչագան Բարեպաշտի սահմանադրութիւնը գիտական աշխարհին ծանօթ է աւելի քան 150 տարի, բայց չի քննուել, չի նշուել, որ 1500 տարի առաջ Արցախում հանճարեղ մի մարդու կողմից, որ թագաւորել է Հայոց Արեւելից կողմում, ստեղծուել է սահմանադրութիւն, որն ազգի մեծագոյն արժէքներից է: Եւ պատահական չէ, որ միայն անկախութիւն ձեռք բերելուց յետոյ հնարաւոր եղաւ լայն զանգուածներին իրազեկ դարձնել այս երեւոյթին: Փաստօրէն իրաւական պետութեան ակունքը դրուել է 1500 տարի առաջ, մի սահմանադրութեամբ, որի մէջ ազգի պահպանման պայմանը յայտարարուել է համերաշխութիւնը, որի պահանջը զգացուել է դարեր առաջ: Ղարաբաղեան ազգային-ազատագրական շարժումը հենց օրինապահութեան ցայտուն օրինակ էր՝ յենուած մեր աւանդական կարգուկանոնի, ազգային աւանդոյթների վրայ: Բոլոր որոշումները, ներառեալ խորհրդային սահմանադրութեամբ հռչակուած ԼՂՀ-ի անկախութիւնը, կայացուել են օրինական իրաւական ճանապարհով:

Գրքի ծնունդը ողջունեցին ԼՂՀ մշակոյթի նախարար Նարինէ Աղաբալեանը, բանաստեղծ, գրականագէտ, թարգմանիչ Սոկրատ Խանեանը, Վ. Շերմազանեանը, պատմական գիտութիւնների թեկնածու Վահրամ Բալաեանը: Գրքի վերամշակուած տարբերակն առաջիկայում կը հրատարակուի աւելի մեծ տպաքանակով, կրկին Արմէն Դաւթեանի հովանաւորութեամբ: Գրքի մի մասը Հայաստանի ազգային գրադարանը բաժանել է ՀՀ-ում գտնուող դեսպանատներին, իր կապերի միջոցով կը տարածի նաեւ սփիւռքահայ համայնքներում, արտասահմանեան տարբեր գրադարաններում: Հայաստանեան պատուիրակու-

Շար.ը էջ 18

## ՆԵՐԿԱՅԱՑՈՂ ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԻԼԸ ԱՒԵԼԻ ԴԻՒՐԻՆ Է, ՔԱՆ...

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Հայաստանի Հիւսիսը գտնուող Ջաւախքը վերջերս մտահոգութեան եւ լրատուութեանց նիւթ դարձած է: Մեծամասնութեամբ հայաբնակ եւ պատմականօրէն հայապատկան այդ գաւառը ներկայիս Վրաստանի իշխանութեան տակ է՝ սպասելով իր ազատագրումին: Այդ ակնկալութեամբ Ջաւախքի հայ բնակչութիւնը տեւական խլրտումի մէջ է, պահանջելով Հայաստանի միացում, կամ գէթ ինքնավարութիւն:

Պատմական, կրօնական, մշակութային եւ նոյնիսկ արենակցական կապեր ունին հայ եւ վրացի ժողովուրդները: Տակաւին մօտիկ անցեալին Վրաստանի հայ բնակչութիւնը շուրջ կէս միլիոնի կը հասնէր: Թիֆլիսի լաւագոյն տուներով եւ կառոյցներով օժտուած թաղը հայկական Հաւլապարն էր: Սայաթ Նովան թիֆլիսեցի էր, ինչպէս նաեւ Յովհաննէս Թումանեանը, Ղազարոս Աղայեանը, Գաբրիէլ Սունդուկեանը եւ ուրիշներ, որոնց դամբանները կը գտնուին Թիֆլիսի հայոց Ս. Գէորգ եկեղեցիին բակը: Սովետական շրջանին Վրաստան տէր կը կանգնէր Թիֆլիսաբնակ հայ գրողներուն եւ արուեստագէտներուն, որոնց շարքին, օրինակ, Սայաթ Նովայի հանգրուանային տարեդարձները Թիֆլիս կը տօնուէին: Ես անձամբ ներկայ գտնուած եմ Սայաթ Նովայի ծննդեան 275-ամեակի տօնակատարութեան, կազմակերպուած՝ Վրաստանի Գրողներու Միութեան կողմէ եւ մասնակցութեամբ Սովետ Միութիւնը բաղկացնող 16 հանրապետութիւններու համապատասխան ներկայացուցիչներուն եւ հայ Գրողներու Միութեան պատուիրակութեան, զոր կը գլխաւորէր Սերօ Խանզադեանը: Հայկական շարժապատկերի կը կարծեմ թէ առաջին ֆիլմին հերոսը՝ Պեպօն, Թիֆլիսեցի ձկնորս մըն էր: Թատերական կեանքը առաջնորդողները հայեր էին: Վերջապէս, Թիֆլիսը մշակոյթի կեդրոնի վերածողները հայ արուեստագէտներն էին: Մեծագոյն աշուղ նկատուած Սայաթ Նովան, իբրեւ երախտագէտ հայու զաւակ, իր տաղերը գրեց ու երգեց նաեւ վրացերէնով եւ ազերիական թրքերէնով, թէեւ յետագային անոնցմէ ոչ մէկը արժանի եղաւ անոր սիրոյն: Թիֆլիսի մէջ էր Թումանեանի հիմնած «Վերնատունը», որ հաւաքավայրն էր հայ մշակոյթի գործիչներուն: Վերջապէս, Թիֆլի-

Շար.ը էջ 18


ԱՄԱՆՈՐԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ ԽՐԱԽՃԱՆՔ



Խանդավառութեամբ՝
UNEEK ENTERTAINMENT
DJ Սագօ
Կաղանդ Պապա, փոքրիկներու նուէրներ,
ճոխ յայտագիր եւ անակնկալներ
31 Դեկտեմբեր 2010 – Երեկոյեան Ժամը 8էն սկսեալ
Կարօ Սողանալեան սրահէն ներս
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104
Մուտքի նուէր $50 ($25 5-12 տարեկան Փոքրիկներու)
Հեռաձայնել (626) 497-5111 Քնարիկին

NEW YEAR'S EVE
Dinner Dance
Music performed by
UNEEK ENTERTAINMENT
DJ Sako
Entertaining program with many surprises
Santa Claus, gifts for children,
December 31, 2010, starting at 8 pm.
Garo Soghanalian Hall
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104
Donation: $50 ($25 for children)
Please call (626) 429-8366 Dzovig

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՔԻԱԹՆԵՐ
## ԼԵՈՆԻԴ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ
## Հեքիաթասացը

Այս տարուայ Մարտի 15-ին լրացաւ Լէոնիդ Ենգիբարեանի ծննդեան 75-ամեակը: Մեծ դերասանը, մնջախաղացն ու բանաստեղծն իր ապրած 37 տարիների ընթացքում հասցրեց բազմահազար մարդկանց ժպիտ ու բերկրանք պարգեւել, երջանկութիւն ու բարութիւն փոխանցել եւ իրաւամբ վաստակել բոլոր ժամանակների ծաղրածուի բարձրագոյն անվկայագիր տիտղոսը:

Ենգիբարեանի բեմական արուեստից ոչ պակաս սիրուել ու գնահատուել են նաեւ նրա գրական ստեղծագործութիւնները. առաջին ժողովածուն՝ «Առաջին ռաունդը», ռուսերէն լոյս է տեսել դեռեւս 1971-ին, իսկ այս Աշնան հայերէն լոյս կը տեսնի «Վերջին ռաունդը»:

Հայաստանում Մարտ ամսից սկիզբ առած յոբելեանական միջոցառումները կը շարունակուեն մինչեւ աշուն: Իսկ անձամբ ինձ համար միշտ հոգու պարտք է եղել հայերէն թարգմանութեամբ ներկայացնել Լէոնիդ Ենգիբարեան-ստեղծագործողի մանրապատումները մի պարզ ու մարդկային պատճառով՝ նրա արուեստի երկրպագուն լինելուց զատ, մեծ արուեստագէտն ինձ հոգեհարազատ է եղել նաեւ նրանով, որ յատկապէս պատանեկան-ուսանողական տարիքում շատերն են ինձ արտաքնապէս նմանեցնել Լէոնիդին:

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Ամբողջ գիշեր հսկայական տան պատուհաններից մէկը լուսաւոր-ուած էր: Լուսամուտից այն կողմ ապրում էր հեքիաթագիրը (որոշ մարդիկ նրան բանաստեղծ էին ան-ուանում). Նա հեքիաթներ էր գրում եւ նուիրում մարդկանց, քանի որ առանց հեքիաթների դժվար էր նրանց համար:*

*Նրա սեղանին բազմաթիւ գոյնզ-գոյն մատիտներ կային: Սարսափելի հեքիաթները նա գրում էր սեւ մատիտով, իսկ ուրախները՝ կարմի-րով, դեղինով, կանաչով, սպիտա-կով: Բայց մի անգամ... մի չար ու անմիտ մարդ գողացաւ տարաւ բո-լոր մատիտները: Նա հեքիաթագ-րին թողեց միայն սեւերն ու սպի-տակները եւ հեռանալիս ասաց. «Ա՛յ, հիմա նա կը գրի այնպէս, ինչպէս պէտք է»:*

*Երկար կանգնած մնաց տրտմած նկարիչը դատարկուած սեղանի մօտ, ապա բարձրացրեց բաճկոնի օձիքը, հանգցրեց լամպը ե տնից դուրս եկաւ:*

*Նա քայլում էր՝ չիմանալով դէպի ուր: Դանդաղ քայլում էր անձրեւի տակ իր քաղաքում:*

*Երբ յոգնեց եւ կանգ առաւ, նրա այտին խոնաւ մի տերեւ հպուեց, եւ նա տեսաւ, որ տերեւը մուգ կանաչ է, ապա տեսաւ, որ ասֆալտը արծաթագորշ է, հորիզոնն արդէն բաց երկնագոյն է, իսկ տանիքները՝ մաքուր կղմինդրակարմիր:*

*Նա ժպտաց, հաւաքեց այդ բոլոր գոյները ե տուն վերադար-ձաւ:*

*Նա նորից գրում է: Նա նորից երջանիկ է:*

*Ամենաերկար գիշերը*

*Դա տեղի ունեցաւ Դեկտեմբե-րի 21-ի լոյս 22-ի գիշերը: Գիշերը երկար-երկար էր: Նա սկսում էր անվերջ թուալ: Քաղաքով մեկ նոյ-նիսկ գիշերուանից էլ ահաւոր բամ-բասանք էր սողում, Նորին Ջագրելի Սողունութիւն Բամբասանք. «Գի-շերը չի վերջանալու... չի վերջա-նալու... երբեք չի վերջանալու...«:*

*Ցոզնած մարմրում էին լապ-տերները, ճարճատում եւ գալար-ւում էին կրակների լեզուակները: Էլեկտրականութիւնը սպառուելու վրայ էր: Իսկ այդ դէպքում ո՞վ պէտք է լուսաւորեր ե այրուեր, հետեւաբար եւ դիմադրեր...*

*Հրաման էր արձակուած՝ բոլո-րը հաւաքուեն գլխաւոր մարզա-դաշտում եւ քննարկեն ստեղծուած իրավիճակը:*

*«Բոլորին, բոլորին, բոլո-րին...»՝ սկսեց թարթել մարզադաշ-տի լուսատախտակը՝ հաղորդելով հրամանը, եւ այդ լուրը էլեկտրա-կան լիցքերի ճայթիւնով կայծակնօ-րէն տարածուեց քաղաքում: Առա-ջինը մարզադաշտ եկան փողոցային լապտերները՝ գլուխ-լամպերը տա-րուբերելով, հներն ու ժամանակա-կիցները՝ այսպես կոչուած ցերեկա-յին լոյսով, որից, ի դէպ, իրենք ամաչում եւ իրար մէջ մեռելային էին անուանում: Նրանց հետեւից ցատկոտելով գալիս էին նորաձենե-րը՝ տարագոյն կարճլիկ լուսամ-փոփներով սեղանի լամպերը: Կի-նոստուդիայից քարշ գալով եկան հսկայ «դիգերը»՝ ամբողջ ընտա-նիքներով, «կնիկ-երեխեքով», որոնք շաղակրատում եւ ֆշշացնում էին գրաֆիտային ածուխների մնացորդ-ներով՝ իրենց հետեւից քարշ տալով հաստ մալուխները, առանց որոնց նրանք երբեք եւ ոչ մի տեղ չէին ներկայանում: Մարզադաշտ սլացան նաեւ աւտոմեքենաների լուսարձակ-ները՝ աչքերը չռած:*

*Եւ հրաւիրուածները ժամա-նում ու ժամանում էին, մարզադաշ-տը ողողուած էր հազարաւոր չողա-ցող կրակներով: Ո՛վ ասես, որ չկար այնտեղ:*

*Գլխաւոր տրիբունայի մօտ տե-ղաւորուեց փարոսը՝ ահռելի, լար-ուածութիւնից կաս-կարմիր կտրած, քանի որ ստիպուած էր եղել իր հետ մարզադաշտ քարշ տալ նաեւ պառաւ աշտարակին: Կողքին եղբայրն էր, նա էլ էր փարոս: Մանկութիւնից նրան տանջում էր փարոսների ժա-ռանգական հիւանդութիւնը՝ առ-կայծախտը:*

*Երկինքը մրոտում էր կերոսի-նի անլուայ լամպը՝ քաղաքում յայտնի նաւթավառի դուստրը, նրան դեռես երեկոյեան էին լիցքաւորել, եւ բո-լորին համոզել էր, որ ինքը իբր երբեք չի դաւաճանել իր պրիմու-սին, եւ իբր նա բոլորոն էլ դրանից չէ պայթել: Գրպանի լապտերը վազվ-զում էր ամբողջ դաշտով՝ մոլորուե-լով պատւանդանների ու եռոտանի-ների միջեւ, մինչեւ որ մարտկոցը նստեց, եւ նա հանդարտուեց: Բնա-ճարպեմոմը խցկուել էր զինուորա-կան լուսարձակի կողքին, նա հալ-ւում էր սիրուց՝ բնաճարպ արցունք-ների մէջ կորած, իսկ լուսարձակը բութ սեւեռուել էր երկնքին ու լռում էր. տանել չէր կարողանում կնոջ արցունքներ: Ճանճերից ծրտոտ-ուած վեցմոմանոց լամպը հայհո-յանքների տարափ էր տեղում: Երկու լուսացոյցները ապարդիւն փորձում էին կարգուկանոն սահմանել, իսկ նորերը ժամանում էին ու ժամա-նում: Միայն յաւերժական կրակը չկար, բայց նրանից ոչ ոք չէր նեղանում, բոլորը գիտէին, որ նա իր յաւերժական պահակէտում է:*





*Խօսում եւ գոռում էին միաժա-մանակ, հռետորների ձայներն ար-դէն խռպոտել էին, իւրաքանչիւրն իր ցաւից էր բողոքում՝ մէկի լարն է գերշիկացել, միւսի ապակիներն են ճաքել, իսկ երեքին կարճ միացմամբ արդէն բուժկէտ են տարել:*

*Միայն կինոթատրոնների «մուտք» եւ «ելք» մակագրութիւն-ներով մուգ կարմիր քառակուսի կրակներն էին լռում: Նրանք իրենց աշխատավայրերում այնպիսի բա-ներ էին տեսել, որ ոչնչով չէին զարմացնի:*

*Եւ յանկարծ համընդհանուր յուզմունքի թէժ պահին մարզադաշ-տի լուսատախտակի վրայ փայլեցին Արեգակի առաջին ճառագայթնե-րը: Բոլորը հանդարտուեցին:*

*Ծանր պայքարից յետոյ դան-դաղ ծագեց Արեգակը: Ծեր բարի Արեգակը, որ բարեկամութիւն էր արել դեռես Մայակովսկու հետ: Նա չէր տնքացել ե խուճապահար եղել, նա պայքարել էր: Եւ յաղթել էր: Եւ հիմա նա տխուր ժպտում էր՝ ուղ-ղելով իր ճառագայթները: Եւ բոլո-րը սկսեցին մի քիչ ամաչել իրենց փոքրոգութիւնից: Բոլորն սկսեցին մարել եւ ցրուել մարզադաշտից՝ իրենք իրենց խոսք տալով միշտ պայքարել մինչեւ վերջ:*

### Առաւօտեան

*-Գարո՛ւն է, գարո՛ւն, կռկռաց ծեր ագռաւը,- ի՞նչ էք բոլորդ ծլլում: Միեւնոյն է, բոլորդ կը ծերանաք, եւ ձեր փետուրները կը թափուեն վաղ թէ ուշ: Կարծես աշուն չի գալու, ե ձմեռ չի լինելու:*

*- Հմմ...- քամահրանքով խրխնջաց ծեր ձին եւ նայեց ագռա-ւին՝ ցանկանալով ասել, որ գարունը դա կանաչ մարգագետիններն են, սէրն է...*

*Բայց նրան մտրակեցին՝ երբ թամբի տակ ես, մի՛ փիլիսոփայիր: Եւ նա հեռացաւ:*

*Իսկ ագռաւը թեւերը թափա-հարեց եւ իջաւ ճանապարհի վրայ՝ դեռեւս տաք նախաճաշն անուշ անե-լու:*

### Կատուն

*Զօլաւոր պոչով կատուն ասաց Մեծ Աստուածուհուն. «Խնդրում եմ, շատ եմ խնդրում, Մե՛ծ Աստուա-ծուհի, դու ամէն ինչ կարող ես անել, ինձ կին դարձրու: Ես այնքան եմ ուզում»:*

*Եւ Մեծ Աստուածուհին ասաց. «Դա դժուար չէ անել, սակայն սիրելն է դժուար. իսկ կինը, եթէ չի կարող սիրել, դադարում է կին լինելուց»:*

*«Ես կը սիրե՛մ, կը սիրե՛մ»,- երդուեց զոլաւոր պոչով կատուն:*

*«Դէ լա՛ւ,- ասաց Մեծ Աստուա-ծուհին:-*

*Մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք«:*

*Եւ կատուն վերափոխուեց կնոջ:*

*Նա սիրեց մէկին, որ գեղեցիկ*

*Շար.ը էջ 18*



## USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES

Proudly Announces

### INTERNATIONAL SYMPOSIUM

# THE ARMENIAN DIASPORA

## Elective Leadership & Worldwide Structure




**SATURDAY, NOVEMBER 20, 2010, 9:30 A.M. - 4:30 P.M.**

Town & Gown, University of Southern California

USC **Entrance 3** on Figueroa Street, Los Angeles, California

*The symposium is open to the public ♦ Complimentary breakfast and lunch will be served*

*For reservations please contact: armenian@college.usc.edu*

**USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES**

**National Honorary Council**
Gov. George Deukmejian
Hon. Edward Djerejian
Hon. John Marshall Evans
Dr. Vartan Gregorian
Hon. Paul Ignatius
Mr. Jerry Turpanjian

**Leadership Council**
Dr. Mihran Agbabian
Mr. John Berberian
Dr. R. Hrair Dekmejian
Mr. Charles Ghailian, Chair
Mr. Frank Varant Melkonian
Dr. Donald Earl Miller
Mr. Vahe Karapetian
Mrs. Lori Muncherian
Mr. Gerald Papazian
Mr. Harut Sassounian
Mr. Sinan Sinanian
Hon. Dickran Tevrizian
Mrs. Savey Tufenkian

## «ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ» ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆԴԷՍԸ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ



Հարաւային Գալիֆորնիոյ Կլենտէյլ քաղաքի մէջ լոյս տեսնող իր ձեւ ու բովանդակութեամբ գրական-մշակութային պատկերազարդ հանդէս «Համայնապատկեր»ը, այս տարի, կը բոլորէ իր հրատարակութեան տասնամեակը:

Ուրախութեամբ կ՚արձանագրենք, թէ ՀՀ Սփիւռքի նախարարութեան եւ Հայկական Գոնկրեսի նախաձեռնութեամբ Երեւանի մէջ կազմակերպուած է Սփիւռքի «Լաւագոյն հայկական լրատուական Միջոց» անուան տակ մրցոյթ մը, ուր մեր Թանկագին բարեկամ Սարօ Գօդակեանի (Կիւմրեցի) խմբագրութեամբ լոյս ընծայուող վերոյիշեալ համանուն հանդէսը արժանացած է առաջին մրցանակին:

«Համայնապատկեր»ի տասնամեակի այս ուրախ առիթով, Հայաստանի մեր պատմական Կիւմրիի քաղաքապետութիւնը՝ խմբագիր, «Լրագրողներու Միջազգային Ընկերակցութեան» անդամ եւ Հայաստանի Գրողներու Միութեան Պատուագրին արժանացած գրող՝ իր կիւմրեցի հայրանակից Գօդակեանի լամբակը զարդարած է պատուաւոր «ՎԱՐՊԵՏ»ի կրծքանշանով:

«ՄԱՍԻՍ» կը շնորհաւորէ «Համայնապատկեր»ի հրատարակութեան տասնամեակը, ինչպէս նաեւ անոր արժանաւոր խմբագիր՝ Սարօ Գօդակեանը, մաղթելով անոր քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ բեղմնաւոր աշխատանք, իր երախտաշատ մամլոյ ասպարէզէն ներս:

## ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

## ՀԱՅ ԹՄՐԱՄՈԼՆԵՐ ԲՈՒՄԵՀԵՆԻ ԱՊԱՔԻՆՄԱՆ ԿԵԴՐՈՆՈՒՄ (ԹԵՀՐԱՆ)

Թեհրանից ոչ շատ հեռու գտնուող Բումեհէն քաղաքում կայ թմրամոլների ապաքինման մի կենտրոն «Քեամփէ Հէջրաթ» անունով, որտեղ ներկայիս գտնւում են նաեւ 16 հայ երիտասարդներ, այս ցաւալի իրողութեան մասին տեղեկացնում է «Ալիք» օրաթերթում տպգրաւուած Ժօզէֆ Մեհրաբեանի յօդուածը: Ժիլբերթը, որն անցեալում բռնցքամարտիկ է եղել, եւ նոյն կենտրոնում ապաքինուել է թմրամոլութիւնից, այժմ փորձում է օգնել նաեւ միւս երիտասարդներին՝ փրկուելու այս չարիքից: Հեղինակը կոչ է անում այցելել այս երիտասադներին եւ փորձել օգնել նրանց, բայց այն ինչ աւելի կարեւոր է՝ հասկանալ երիտասարդների թմրամոլութեան պատճառները եւ կանխարգելել այն:

massispost.com
daily news updates

## ՊՂՊԵՂ

Պղպեղը Ամերիկայից Եւրոպա է բերել Քրիստափոր Քոլոմպոսը: Մեքսիքայի տարածքում ապրող ացտեկները եւս ժամանակին սննդի մէջ ծեծած պղպեղ էին աւելացնում:

Հայրենիքում՝ Կենտրոնական եւ Հարաւային Ամերիկայում, նաեւ Ֆլորիտայում (ԱՄՆ) պղպեղը աճում է որպէս վայրի բոյս: Դրանք բազմամեայ ոչ խոշոր թփեր են՝ կարմիր, նարնջագոյն, դեղին գոյներով եւ արտաքին տեսքով միմեանցից տարբեր: Մենք, սակայն, գիտենք, որ պղպեղը միամեայ խոտաբոյս է: Այն պատկանում է մորմազգիների ընտանիքին (պտուղները խոշոր եւ գունաւոր են): Պղպեղի մէջ որքան շատ է կապսացինի պարունակութիւնը, այնքան կծու է պղպեղը: Կապսացինը հակաբորբոքային նիւթ է, որ կանխում է քաղցկեղածին բջիջների առաջացումը, պայքարում է ստամոքսի եւ տասներկումատնեայ աղիի խոց առաջացնող մանրէների դէմ, օգտակար է բրոնխիտի դէպքում: Սակայն կապսացինի չարաշահումը նաեւ կարող է գրգռել եւ աղեստամոքսային տրակտի խանգարումներ առաջացնել:

Բանջարեղէնի պղպեղները, որոնց նաեւ անուանում են բուլկարական (չնայած որեւէ կապ չկայ այդ երկրի հետ), բաւական տարածուած են եւ վիտամիններով շատ հարուստ՝ B1, B2, PP եւ այլն: Յատկապէս կանաչ պղպեղի մէջ վիտամին E-ի պարունակութիւնը ամենաշատն է: Գերադասելի է այն ուտել հում վիճակում:

Դեղին, կարմիր, նարնջագոյն պղպեղները հարուստ են բետտակարոտինով, որ նախապահպանում է սրտային հիւանդութիւններից եւ քաղցկեղի որոշ տեսակներից: Բացի այդ, կարմիր պղպեղը միւսների համեմատ աւելի քաղցր է եւ զգալի քանակութեամբ պրուիտամին է պարունակում:

Սիրտ-անօթային հիւանդութիւնների դէպքում քաղցր պղպեղն անհրաժեշտ է պարտադիր ընդգրկել ամենօրեայ սննդակարգում: Հենց այս բանջարեղէնն է, որ պարունակում է այնպիսի նիւթեր, որոնք ոչ միայն ամրացնում են մազանօթների պատերը, այլեւ բարձրացնում արիւնատար անօթների առաձգականութիւնն ու ճկունութիւնը:

Քաղցր պղպեղը յատկապէս օգտակար եւ կարեւոր է արեան շրջանառութեան խախտման դէպքում, հիպերտոնիայի, աթերոսկլերոզի նախնական փուլում, բացի այդ, օրգանիզմից հեռացնում է խարամներն ու թունաւոր նիւթերը:

Քաղցր պղպեղը հարուստ է վիտամիններով՝ ռուտինով (P), որը հեղուկացնում է արիւնը եւ ամրացնում արիւնատար անօթների պատերը. այդ իսկ պատճառով շատ օգտակար է տրոմբոֆլեբիտի եւ երակի վարիկոզլայնացման դէպքում: Բացի այդ, պղպեղը նաեւ կարոտին, կալիում, կալցիում, մագնիում, ֆոսֆոր, երկաթ, կրեմնիում է պարունակում, նոյնիսկ՝ արծաթ եւ պղինձ, որոնք ոչ միայն նպաստում են օրգանիզմի ամրապնդմանը, այլեւ անփոխարինելի բուժիչ միջոցներ են համարվում սակավարյունութեան, անքնութեան, յոգնածութեան, շաքարային դիաբետի, մաշկային եւ տեսողական խնդիրների դէպքում: Դանդաղեցնում է ծերացման ընթացքը: Օգտակար է թէ՛ մեծերին, եւ թէ՛ փոքրերին: Պղպեղը համեղ եւ օգտակար է բոլոր ձեւերով՝ հում, տապակած, խորոված, շոգեխաշած: Ներկայացնենք քաղցր պղպեղով մի աղցան. կարմիր եւ դեղին պղպեղները երկարութեամբ կամ գոլակներով կտրատել եւ տապակել մի քանի ատամիկ սխտորի հետ՝ ձիթապտղի իւղի մէջ, մինչեւ փափկելը:

Աւելացնել քացախ, 2 ճաշի գդալ ռեհան (կտրատած): Մատուցել կարելի է եւ՝ տաք, եւ սառը վիճակում:

Յատկապէս կծու պղպեղը նաեւ հակացուցումներ ունի. այն մեծ քանակութեամբ խորհուրդ չի տրւում գաստրիտի, բարձր թթուայնութեան, քրոնիկ փորկապութեան, ենթաստամոքսային գեղձի բորբոքման (պանկրեատիտ), ստամոքսի խոցի եւ 12-մատնեայ աղիի բորբոքման սրացման դէպքում եւ անհատական անընկալունակութեան ժամանակ:

Մետեորիզմի դէմ Հիւթաքամիչով քամել 500 մլ թարմ քաղցր պղպեղի հիւթն ու անօթի վիճակում օրը 2 անգամ խմել 250 մլ չափով: 2 ժամ ընդմիջում տալ: Ընդունել մինչեւ ինքնազգացողութեան լիարժէք լաւանալը: Այս նոյն միջոցն օգնում է նաեւ հեռացնել ստամոքսային ծակծկոցներն ու ջղակծկումները:

Բարեկազմութեան համար Քերիչով անցկացնել բուլղարական պղպեղը (ցանկացած գոյնի), դդմիկը, գլուխ սոխը եւ լոլիկը: Բոլորը առանց իւղի շոգեխաշել: Վերջում որքան հնարաւոր է շատ խառը կանաչեղէն աւելացնել:

Ջուլիետա Սահակեան



## ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

*Շարունակուած էջ 3-էն*

*Աֆղանստանը, Սոմալին, Զիմբաբուէն եւ այլն»:*

*«Համաձայն եմ: այդ երկրներում ոչ մի անկախ թերթ չկայ, իսկ Հայաստանում, յամենայնդէպս, մէկ-երկուսը կան: Այդ երկրներում ընտրութիւնների ժամանակ հարիւրաւոր մարդիկ են սպանւում, իսկ Հայաստանում՝ ընդամէնը տասը: Ինչպէս մի առիթով նշել եմ, նման փաստարկ բերողների պարագայում մենք գործ ունենք ենթագիտակցական ռասիզմի դրսեւորման հետ, որի էութիւնն է. «Դուք մեզ հետ, այսինքն զարգացած ժողովրդավարութիւնների հետ չափուելու արժանի չէք, չափուէք ձեզանից աւելի յետամնաց երկրների ու ժողովուրդների հետ եւ մխիթարուէք, որ նրանց վիճակը վատթար է ձեր վիճակից», - բխեցրեց ՀԱԿ-ի առաջնորդը:*

*Իր ելոյթում նախագահը խիստ քննադատութեան ենթարկեց մարդու իրաւունքների պաշտպանութեան համար պատասխանատուութիւն կրող հայաստանեան պաշտօնեաներին՝ Ազգային ժողովի պետա-իրաւական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանին եւ Մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանին:*

*Տէր-Պետրոսեանը խիստ քննադատութեան ենթարկեց նաեւ նախագահ Սերժ Սարգսեանին, ով վերջին ասուլիսներից մէկում անդրադառնալով բանակում տիրող արատաւոր երեւոյթներին, մասնաւորապէս, սպանութիւններ, ինքնասպանութիւնների, խոշտանգումների յաճախացած դէպքերին, ըստ ընդդիմութեան առաջնորդի՝ «փոխանակ խօսելու այդ արատներն արմատախիլ անելու անհրաժեշտութեան եւ կատարուած յանցագործութիւնների պատասխանատուներին պատժի ենթարկելու մասին, հարկ է համարել իր խորագոյն զգուանքն արտայայտել յիշեալ երեւոյթները բացայայտողների ու քննադատողների նկատմամբ»:*

*«Սերժ Սարգսեանն այդպիսով փաստօրէն պարտակում է բանակում տեղի ունեցող հրէշաւոր յանցագործութիւնները եւ խրախուսում դրանց շարունակումը, սպայակազմին հասկացնել տալով, թէ ինչ ուզում էք արէք, ես ձեր թիկունքին եմ», - յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեան:*

*Ընդդիմութեան հանրահաւաքն աւարտուեց երթով, որի ընթացքում որեւէ միջադէպ չարձանագրուեց:*

## ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋԵԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ՅՈՒՆՋՔ»Ը

*Շարունակուած էջ 7-էն*

*Հայաստանի կեանքի բաժանմունքները ներկայացնելէ ետք, կեդրոնացաւ ստալինականութեան գործած աւերին եւ 60-ական թուականներու ձիւնահալի տարիներու զարգացումին վրայ: Հայաստանի մտաւորականութեան ապրումները, գրողին կենսագրութիւնը եւ մանաւանդ Պարոյր Սեւակի կեանքին ու «Եղիցի լոյս» գործին լոյս ընծայման հետ առնչուած տագնապները նկարագրելով, Ալաջաջեանի յուշագրութիւնը՝ 1968-1971 տարիներու լաւագոյն եւ հարազատ վաւերագրութիւնը նկատեց:*

*Յայտագրի երաժշտական ընդմիջումին ընթացքին մասնակցութիւն բերին դաշնամուրային կատարումներով՝ ինն տարեկան Նանորն ու տասը տարեկան եղբայրը՝ Փիթըր Տէր Պետրոսեանները, որոնք Հ.Բ.Ը. Միութեան Տեմիրճեան-Մանուկեան վարժարանի աշակերտներ են: Անոնք նուագեցին Կոմիտասի «Շուշիկի» եւ Արամ Խաչատուրեանի «Վարդագոյն Աղջիկներու Պարը» երկու կտորները:*

*Երրորդ եւ վերջին ներկայացուող գործն էր «Հայ Մամուլի էջերում» հրապարակագրական յօդուածներու հաւաքածոն, որ լոյս տեսած է 2008 թուականին: Մեկնաբանողն էր Տեմիրճեան-Մանուկեան վարժարանի հայագիտական նիւթերու դասատու, գրականագէտ եւ «Նոր Օր» շաբաթաթերթի աշխատակից Հրաչ Սեփեթճեան: Հատորը կը պարունակէ յօդուածներ, ակնարկներ, ուսումնասիրութիւններ եւ հարցազրոյցներ՝ խորհրդային եւ յետխորհրդային ժամանակներուն մամուլին մէջ հրապարակուած: Ստեփան Ալաջաջեանի աշխատակցութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի մամուլին՝ 1957-2005 թուականներուն, կ՚ընդգրկէ նաեւ նիւթեր որոնք անտիպ մնացած են, խորհրդային գրաքննիչներու որոշումներով: Սեփեթճեան հետաքրքրական ձեւով ներկայացուց Ալաջաջեանի քաղաքական եւ գրական զգայուն հարցերու նուիրուած յօդուածներու ոգին ու բովանդակութիւնը :*

*Յայտագրի աւարտին, երգիչ Խաչիկ Նահապետեան ապրումով երգեց Արմէն Մանդակունեանի «Մեր Հայոց Լեզուն» սիրուած երգը: Հանդիսավար Սեմերճեան յայտագիրը փակելու հրաւիրեց Թեմիս երեց հոգեւորականներէն Դոկտ. Տէր Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեանը, որ իր կարգին, դրուատեց Ալաջաջեանի գրական վաստակը, ապա՝ օրհնութեամբ փակեց հանդիսութիւնը:*

## ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍԸ ՄԵՐՏԻՆԵԱՆԷՆ ՆԵՐՍ

*Շարունակուած էջ 8-էն*

*տեւողութեան աշակերտները կը սորվին անոր մասին եւ կ՚եզրափակեն միօրեայ տօնախմբութեամբ մը: Այս տարի, Հոկտեմբեր 21-22, 2010ին, ունեցանք հայերէն գիրքերու, յուշանուէրներու ցուցահանդէս վաճառք մը, որ ստեղծեց մեծ խանդավառութիւն:*

*Ուրբաթ, 22 Հոկտեմբերին դասաւանդութիւնները դադրեցան ժամը 12ին: Աշակերտ-ուսուցիչ-ծնողք վայելեցին «հայկական ճաշ» մը, որմէ ետք սկսաւ գեղարուեստական յայտագիրը:*

*Առաջին հերթին մանուկներու սիրուած երգչուհի Մակին ելոյթ ունեցաւ փոքրիկներուն համար: Ապա, ամբողջ աշակերտութիւնը, ինչպէս նաեւ ծնողներու հոծ խումբ մը հաւաքուեցաւ սրահ, ուր մեծ խանդավառութիւն ստեղծեց յայտնի մանկագիր եւ անգուգական հեքիաթասաց Տիկ. Ալիծ Աղպապեանը:*

*Ան համով-հոտով, երգով ու ծափով ներկաները փոխադրեց Տարօն Նահանգի Հացեկաց գիւղը, ծանօթացուց պատանի Մեսրոպին, որ մեծնալով հնարեց մեր ժողովուրդը կորուստէ փրկող Այբուբենը:*

*Յայտագրի վերջին բաժնին մէջ ելոյթ ունեցան Բ.-Զ. կարգերու աշակերտները, որոնք արտասանութիւններով, երգերով ու խօսքերով գովաբանեցին Հայ Մշակոյթը՝ ընդհանրապէս եւ հայ լեզուն՝ ի մասնաւորի: Անոնք իրենց մանկական շուրթերով փաստեցին, որ քանի կայ հայ դպրոցը՝ չեն կորսուիր Հայ լեզուն ու մշակոյթը: Որքան յարմար է կրկնել Թաթուլ Վանանդեցիին խօսքերը հայերէն գիրերու բերնով ըսուած՝*

*«Մեսրոպը գիս ծնաւ... Ազգս գիս կարդաց...*

*Ժամանակը գիս փոխեց... Հարկը գիս տարածեց...*

*Պատի՛ւ գիս հնարողին, Պարծա՛նք գիս գործածողին»:*

*Մերտինեան Հայ Աւետարանական վարժարանը հիմնուած է 1982ին ու 28 տարիներէ ի վեր կը ծառայէ հայ համայնքին՝ կրթական ու քրիստոնէական ընտիր դաստիարակութեամբ: վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Համալսարաններու Արեւմտեան Ընկերակցութեան կողմէ - Western Association of Schools and Colleges (WASC): Վարժարանի մասին յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ (818) 907-8149:*

## ՅԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄԻ ՅԻՄՆԱԴՐԱՄ

*Շարունակուած էջ 8-էն*

*ները պիտի կարենան հինգ պատուաստ ստանալ մէկ սրուակի մէջ, նուազեցնելով անոնց մօտ ընդհանրապէս տիրող որեւէ ասեղի դէմ վախն ու ցաւը», կ՚ըսէ Գայանէ Սահակեան, Հայաստանի ԱՊԾ-ի եւ Մաքրութեան ու Համաճարակներու դէմ Պետական Վերատեսչութեան տնօրէնը: «Այս մէկը բնական ու օգտաշատ յաւելում մըն է ԱՊԾի գործունէութեան եւ ուրախ ենք որ անգամ մը եւս ՀՄՀՊՀ-ն իր նիւթական նեցուկը կը բերէ մեր ծրագիրներուն»:*

*ՀՄՀՊՀ-ի անցեալի ներդրումներուն մաս կը կազմէ UNICEF-ի, ՀՀԱՆ-ի ու Ռոսթրոփովիչ Հիմնարկին հետ համատեղ ձեռնարկ մը հարսանիթի (measles),ականջախոյլի (mumps) եւ ընդոծին կարմրաբիծի (congenital rubella) դէմ, որուն ընթացքին կը պատուաստուէին 924,000 անձ: ՀՄՀՊՀ-ն նաեւ առանցքային դեր կը խաղար ՀՀԱՆ-ի բերած իր երկարաժամկէտ նեցուկով՝ ֆինանսաւորելով անոր ընթացիկ պատուաստի ծրագիրները, որոնց շնորհիւ հազարաւոր երեխաներ կը ստանային իրենց պատուաստները Հայաստանի մէջ:*

*ՀՄՀՊՀ-ն կենսական դեր խաղացած է ու կը շարունակէ խաղալ ԱՊԾ-ի ընթացիկ պատուաստներու մատակարարման աշխատանքին մէջ: Փենթավալենթի յաւելումը ԱՊԾ-ի ցանկին քայլ մը եւս կը կ՚աւելցնէ անկախութենէն ի վեր Հայաստանի հանրային առողջապահութեան կատարած նուաճումներուն, միաժամանակ զայն մասնակից դարձնելով ՊՀԴ-ի արշաւին՝ մինչեւ 2015 մէկ միլիոնով պակսեցնելու համաշխարհային մահերու թիւը:*

Հ.Մ.Մ. ի Տիկնանց
Յանձնախումբը
սիրով կը հրաւիրէ ձեզ

«Թէյ եւ բրենչ պրենչէ»
ճաշկերոյթին որ տեղի պիտի ունենայ
Դեկտեմբեր 5-ին
«Կարօ Սողանալեան» սրահէն ներս
առաւօտեան ժամը 10-ին
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Հեռաձայնել Քնարիկին (626) 497-5111
կամ Ծովիկին (626) 492-8366



## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԱՐՑԱԽ

*Շարունակուածէջ 13–էն*

*թիւնը գրքեր նուիրեց արցախեան գրադարաններին, պետական համալսարանին, անհատների:*

*ԼՂՀ մեկնած պատուիրակութիւնն ուխտագնացութիւն էր կազմակերպել Վաչագան Բարեպաշտի գերեզմանին, որը գտնւում է Մարտակերտի շրջանի Եղիշէ Առաքեալի վանքի հարեւանութեամբ, բարձր ժայռերի վրայ, Մարաղա գիւղից վերեւ: «Սա առաջին ուխտագնացութիւնն էր, եւ կարծում եմ, որ Վաչագան Բարեպաշտի գերեզմանը պիտի դառնայ ուխտատեղի, իսկ ուխտագնացութիւնը կը փորձենք աւանդական դարձնել: Նշեմ, որ մի կարճ ժամանակ տարածքը գտնուել է ատրպէյճանցիների տիրապետութեան տակ եւ պղծուել է: Հաւանաբար գանձ են որոնել ատրպէյճանցիները, չիմանալով, որ ամենամեծ գանձը Սահմանադրութիւնն է»,- ասում է Դ. Սարգսեանը: Պատուիրակութիւնն այցելել է նաեւ Շուշիի Ս. Ղազանչեցոց եկեղեցի, պատմական յուշարձաններ, մասնակցել Ստեփանակերտի տօնակատարութեանը:*

*«Խորհուրդ կայ այն փաստի մէջ, որ նոյն օրը նշւում էր նաեւ Երեւանի եւ Էջմիածնի տօնը՝ երկու հայկական եւ հոգեւոր մայրաքաղաքների: Ե՛ւ այդ տօնակատարութիւնները, ե՛ւ ուխտագնացութիւնը, ե՛ւ գրքի շնորհանդէսը ասես լրացնում էին մէկը միւսին:*

*Արցախն անընդհատ աշխարհին ապացուցում է, որ ինքնուրոյն, կայացած պետութիւն է, պէտք է հաշուի նստել նրա հետ թէ՛ բանակցային կողմով, թէ՛ որպէս ժողովրդավարական պետութիւն»,- կարծում է Դաւիթ Սարգսեանը:*

*ՀԱԳ տնօրէնը հանդիպել է ԼՂՀ մշակոյթի նախարարի հետ, քննարկուել են համագործակցութեան ծրագրեր, գրադարանային խնդիրներ, ԼՂՀ գրադարանների միջեւ ցանցային ապահովման հետ կապուած հարցեր:*

## ԼԵՈՆԻԴ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

*Շարունակուածէջ 14–էն*

*ու բարձրահասակ էր, ե մազերը խարտյաշ էին, որովհետեւ այնքան բարձր էր, որ գլուխը արեւին էր հասնում:*

*Նա նոյնպէս սիրեց կատուին:*

*Սակայն երբ նա ուզեց կատուին համբուրել, դժբախտութիւն պատահեց: Անկլինում յայտնուեց մո՛ւկը:*

*Եւ կատուն մոռացաւ, որ ինքն այլեւս կատու չէ, նետուեց մկան վրայ եւ... կրկին դարձաւ գոլաւոր պոչով մի սովորական կատու:*

*Իսկ նա՞: Ի՞նչ կարող էր անել: Թողեց ու գնաց:*

*Նա բարձրահասակ ու գեղեցիկ էր, եւ մազերը խարտեաշ էին, որովհետեւ այնքան բարձր էր, որ գլուխը արեւին էր հասնում:*

*Երկար արտասուեց կատուն, բայց Մեծ Աստուածուհին անդրդուելի էր: Չէ՞ որ մի կին էլ ինքն էր:*

*Ռուսերէնից թարգմանեց*
*ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ*

## ՆԵՐԿԱՅԱՑՈՂ ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԻԼԸ ԱՒԵԼԻ ԴԻՒՐԻՆ Է, ՔԱՆ...

*Շարունակուածէջ 13–էն*

*սը Թիֆլիս ընողը հայ արուեստագէտներն էին:*

*Այսօր, Վրաստանի նախագահը Սահակաշվիլի կոչուած կարճատես եւ արկածախնդիր երիտասարդ մըն է, որ իր դաստիարակութիւնը ստացած է Մ. Նահանգներու մէջ: Բայց չէ սորված ամենէն հիմնականը, ըստ որուն, դրացիին հետ գոյակցելու եւ խաղաղութեան համար, պարտաւոր է խոհեմ ըլլալ, մանաւանդ չվարելու հզօր դրացիի մը շահերուն հակառակ քաղաքականութիւն: Սակայն տարրական այս իմաստութենէն զուրկ անփորձ այս երիտասարդը նկատի չառնելով իր հզօր դրացիին շահն ու ապահովութիւնը՝ ամերիկեան զօրք բերաւ Վրաստան, բնականաբար այս գրգռիչ արարքը գայրոյթ պատճառեց Ռուսիոյ, որ առիթի կը սպասէր անխոհեմ իր փոքրիկ դրացին պատժելու: Գերագնահատելով իրենց ընծայուած ամերիկեան նեցուկը՝ Սահակաշվիլի յարձակում կազմակերպեց Վրաստանէն անջատուած Աբխազիայի եւ Աճառիայի վրայ, որոնց բնակչութիւնը, մեծաւ մասամբ, ռուսամէտ եւ ռուսահպատակ էին: Մինչ այդ Ռուսիա իր զսպած գայրոյթին եւ մտադրութեան տրուած այս օրինաւոր առիթը օգտագործելով յարձակեցաւ Վրաստանի վրայ, որ ռուս բանակին հասցուցած ֆիզիքական հարուածներուն զուգահեռ, Մ. Նահանգներու բարոյական ապտակն ալ կերաւ: Արդարեւ, ռուս բանակին պատժական արշաւանքը դիտելէ յետոյ, Ա. Մ. Ն. գայն դատապարտեց եւ առ ի մխիթարութիւն 1000 միլիոն տոլար տրամադրեց Վրաստանի քանդումները նորոգելու եւ իր գործակալները վարձատրելու համար:*

*Ահաւասիկ, այս առիթին մասին է որ կը խօսինք, Ռուսիոյ տրուած նոյն առիթը, որ մերն ալ կրնար ըլլալ Ջաւախքը ազատագրելու համար: Չէ՞ որ մերն էր ան եւ մեր ժողովուրդն է որ հոն կ՚ապրի Վրաստանի բռնատիրութեան տակ, բայց եկաւ ու փախաւ առիթը: Այն պահուն, երբ ռուսը կը ծեծէր վրացին, մենք ո՞ւր էինք, ինչո՞ւ առիթէն չօգտուեցանք մեր հողն ու ժողովուրդը ազատագրելու համար: Ռուս պատժական արշաւանքին ընթացքին եթէ մենք ալ ռազմադաշտ ներտուէինք, Ջաւախքի ազատագրումը արդէն կատարուած իրականութիւն եղած կ՚ըլլար:*

*Իմաստութիւն է օգտուիլ ներկայացող առիթէն, որ կրնայ անգամ մըն ալ չներկայանալ ժողովուրդի մը կեանքին մէջ, քան թէ գայն ստեղծել փորձելը:*





## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ Լիբանանի մէջ ունիք կալուածներ (շէնք, յարկաբաժին, հողամաս, խանութ) եւ կ'ուզէք ծախել, այսօր իսկ դիմեցէք ԹՈՐՈՍԻՆ հետեւեալ թիւով՝

011–961–3–381–379

Կամ՝ e-mail-ով՝ Toros@prontoxxy.com



**INVITATION FOR BIDS**
**(IFB) NO. 1702**
**EXTERIOR PAINTING OF BUILDINGS AT MAR VISTA GARDENS**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the exterior painting located at Mar Vista Gardens, 11965 Allin Street, Culver City, CA 90230. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 1:00 p.m. (local time), November 24, 2010.**

**INVITATION FOR BIDS**
**(IFB) No. 1703**
**EXTERIOR PAINTING OF BUILDINGS AT NICKERSON GARDENS**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Exterior Painting located at Nickerson Gardens, 1590 East 114th Street., Los Angeles, CA 90059. . Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 1:30 p.m. (local time), November 24, 2010.**

11/11, 11/18/10
CNS-1978940#
MASSIS WEEKLY



**INVITATION FOR BIDS**
**(IFB) NO. 1704**
**THE LEAD-BASE PAINT ABATEMENT AT MAR VISTA GARDENS**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Lead-Base Paint Abatement located at Mar Vista Gardens, 11965 Allin Street, Culver City, CA 90230. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m. (local time), November 24, 2010.**

**INVITATION FOR BIDS**
**(IFB) No. 1705**
**THE LEAD-BASE PAINT ABATEMENT AT NICKERSON GARDENS**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Lead-Base Paint Abatement located at Nickerson Gardens, 1590 East 114th Street, Los Angeles, CA 90059. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd Floor, Los Angeles, CA 90057 until 2:30 p.m. (local time), November 24, 2010.**

11/11, 11/18/10
CNS-1978977#
MASSIS WEEKLY



## BURBANK AIRPORT

## BID REQUEST

**Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E10-30, Module 12.5 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, December 9, 2010. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for 40 Single Family Condominium units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for November 18, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.**



**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*Հանգուցեալ*
***ՇԱՀՆՈՒՐ ՆՈՐԱՇԽԱՐՀԵԱՆԻ***
*(Ծն. 1953 Լիբանան, մահացած՝ Տէյթըն, Օհայօ, Հոկտ. 3, 2010)*

*մահուան քառասունքին առթիւ, հոգեհանգսեան պաշտօն պիտի կատարուի, Շաբաթ, 13 Նոյեմբեր, 2010, կէսօրուան ժամը 12:00ին, Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, 1510 E. Mountain Street, Glendale:*

*Սգակիրներ՝*
*Մայրը՝ Մարի եւ Սահակ Սէրայտարեան (Նորաշխարհեան)*
*Զաւակները՝ Լէօ եւ Մարգ Նորաշխարհեան,*
*Քոյրը՝ Գաթիա եւ Վարդան Եաղսըզեան,*
*Քրոջ զաւակները՝ Քալին եւ Արա Գամպէրեան,*
*Վանիա եւ Մայքըլ Շանլէյ,*
*Քոյրը՝ Հերա եւ Պերճ Պօյաճեան,*
*Քրոջ զաւակները՝ Սոնիա եւ Ալեքսանտր Ռուսմանիէր,*
*Եւ համայն Նորաշխարհեան, Համալեան, Սէրայտարեան, Եաղսըզեան, Պօյաճեան, Գամպերեան, Շանլէյ, Ռուսմանիէր եւ հարազատները:*

*Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Կլենտէյլի Phoenicia ճաշարանին մէջ, (Լեկսինթընի եւ Սանթրալի անկիւնը):*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*Սփիւռքահայ անուանի արուեստագէտ-նկարիչ Ժոզէֆ Ժիրագօ վերջերս ենթարկուած է սրտի վիրաբուժական յաջող գործողութեան մը: Այժմ տուն վերադարձած ըլլալով կը բոլորէ ապաքինման շրջանը: Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք տաղանդաւոր արուեստագէտին:*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ԿԱՐԻՆԷ ՏԷՖՈՅԵԱՆ վերջերս ենթարկուած է վիրաբուժական յաջող գործողութեան մը: Առ այդ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմնի Վարչութիւնը շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթէ իր անդամուհիին:*

## ԵՐԲ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԼԽԱՏՈՒԵՑ

*Շարունակուած էջ 6-էն*

*լուրուած պետական յանցագործութիւն էր: Երբ իմ վարոյթից վերցրեցին «27-ի» գործով անջատուած մասը եւ տեղափոխեցին Գլխաւոր դատախազութիւն, եւ մէկ տարի յետոյ այդ անջատուած մասը կարճում էին, կոլեգիայի նիստում ես ասացի, որ վարոյթը կարճել չի կարելի»:*

*Հարցին, թէ ինչպէ՞ս է գնահատում Նայիրի Յունանեանի հօր այն յայտարարութիւնը, թէ իր որդիների հետեւում կանգնած ուժեր կային, Գագիկ Ճհանգիրեանը պատասխանել է՝ «Բա որ Նայիրի Յունանեանի հայրը այդքանը գիտի, բա ես ինչքա՞ն գիտեմ»: Գագիկ Ճհանգիրեանը երէկ մեզ հետ զրոյցում ասաց, որ այդ սոսկալի տարելիցի նախօրէին չի ուզում խօսել, թեպէտ նշեց, որ իր կարծիքը չի փոխել:*

**Հրապարակի վրայ է**

**«Յուշերու Բագին»**
**հեղինակ՝**
**Արմէն Ղարիպ**
**(տպ. Պէյրութ 2009)**
**Գինը՝ $20**

**Ստանալու համար դիմել**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**1060 N Allen Ave**
**Pasadena, CA 91104**
**626-797-7680**




## ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

*Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան «Փարամազ» մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 17 Նոյեմբեր 2010ին, երեկոյեան ժամը 8ին, Փասատինայի կեդրոնին մէջ:*
*Ծանօթ. Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:*
*Ներքին Դիւան*

*********

*Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան «Սապահ Կիւլ» մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 24 Նոյեմբեր 2010ին, երեկոյեան ժամը 8ին, Կլենտէյլի կեդրոնին մէջ:*
*Ծանօթ. Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:*
*Ներքին Դիւան*

## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ------------------------------------------**
**Address: ---------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: ------------**
**Tel :---------------------- Fax : ------------------------**


Armenia Fund & Karoun Dairies Present
1st Annual Benefit Concert
ArmeniaFund
All Proceeds to Benefit Armenia Fund Telethon 2010 Water Projects
Sunday, November 21, 2010 | 7:30PM
WATER IS LIFE
Sofi Mkheyan
Eva Rivas
Andre
Razmik Amyan
Students of the Armenian State Theater of Song
Musical Director
Artur Grigoryan
Masters of Ceremony
Hrant Tokhatyan & Anita Hakhhverdyan
THE PASADENA CIVIC
Command the Best
Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA 91101
ticketmaster
Tickets start at $30
For Tickets
Call 1-818-265-0506 or 1-800-888-8897
or log on to www.ticketmaster.com